

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Մէկ Համաժողով, Երկու Առաջնահերթութիւն

Այս օրերուն Երեւանի մէջ տեղի կ'ունենայ Հայաստան-Սփիւռք 6-րդ Համաժողովը:

Ներկայ գտնուելով ու տարբեր ելոյթներու ընդմէջէն ծանօթանալով Համաժողովի ընթացքին արտայայտուած տեսակետներուն, կարելի է արձանագրել որ, բացի Յեղասպանութեան ճանաչման եւ Արցախի հարցէն, անջրպետ մը գոյութիւն ունի Հայաստանի պետական պաշտօնեաներու արտայայտած լաւատեսութեանց ու արտասահմանէն եկած պատուիրակներուն առաջնահերթութիւններուն եւ ունեցած մտահոգութիւններուն միջեւ: Հայաստանի ներկայացուցիչները, սկսեալ նախագահէն, անցնելու համար վարչապետին, պաշտպանութեան նախարարին եւ իշխանութեան այլ ներկայացուցիչներուն, կը խօսին երկրի յառաջդիմութեան, նոր սահմանադրութեան ընձեռած առիթներուն, «օրինակելի ընտրութիւններուն», տնտեսութեան զարգացման, օտար ներդրումներու հոսքի եւ 4 միլիոն հայութեամբ երկիր դառնալու հեռանկարի մասին:

Միւս կողմէ, արտասահմանի ներկայացուցիչները իրենց մտահոգութիւնները կը փոխանցեն առաջին հերթին տակաւ շարունակուող արտագաղթի, ու անոր հետեւանք եղող ժողովրդագրական իրավիճակի վատթարացման, ընկերային անարդարութեանց, ժողովուրդի աղքատութեան եւ երկրի դիմագրաւած այլ տագնապներու մասին:

Համաժողովին նախորդած ժամանակաշրջանին, Հայաստանի մամուլն ու մեկնաբանները կ'արտայայտէին այն կարծիքը, թէ Համաժողովի սփիւռքահայ պատուիրակները կը ժամանեն Հայաստան իշխանութիւններուն կողմէ «շահագործուելու» ու անոնց խնկարկելու համար:

Սակայն, իսկական պատերը եղաւ այն, որ սփիւռքահայութեան ներկայացուցիչները իրենց ելոյթներուն, հարցադրումներուն եւ մամուլի հարցազրոյցներուն ընդմէջէն, առանց վարանելու կը քննադատեն իշխանութիւններու գործելաձեւը, ցոյց տալով որ չեն եկած ծափահարելու եւ կամ ներկայացուած ընդունելու ինչպէս որ է: Այս իմաստով, սփիւռքահայութեան մասնակցութիւնը Համաժողովին կարելի է նկատել արդարացուած:

Այժմ, Հայաստանի ղեկավարներութեան կը մնայ աշխատիլ՝ գոյութիւն ունեցող առաջնահերթութիւններու անջրպետը մօտեցնել զիրար, որպէսզի սփիւռքահայութիւնը աւելի վստահութեամբ իր մասնակցութեան բաժինը բերէ Հայրենիքի զարգացման գործին:

**«ՄԱՍԻՍ»**

## Հայաստան-Սփիւռք 6-րդ Համաժողովի Ընթացքին Սերժ Սարգսեան Դարձեալ Խօսեցաւ 4 Միլիոննոց Երկիր Ունենալու Հեռանկարի Մասին

Սեպտեմբերի 18-ին, Երեւանի կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրէն ներս սկսաւ Հայաստան-Սփիւռք 6-րդ Համաժողովը:

Բացման պաշտօնական նիստի ընթացքին ելոյթ ունեցան ՀՀ սփիւռքի նախարար Հրանտ Յակոբեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը, Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան, Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակո Սահակեանը եւ Արամ Ա. Սեօծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսը:

Նախարար Յակոբեան բացման խօսքին մէջ նշեց, որ Համաժողովին կը մասնակցին աւելի քան 1800 ներկայացուցիչներ 71 երկիրներէ. անոնց մէջ մեծ թիւ կը կազմեն մտաւորականները եւ գործարարները:

Այնուհետեւ համայն հայութեան օրհնութեան խօսք ուղղեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը. «Մեր պետութիւնը՝ թէեւ բազում դժուարութիւններու առջեւ, համայն հայութեան պատուարն է եւ մեր ժողովուրդի գոյատեւման երաշխաւորը: Այսօր ժամանակն է, որ դառն փորձութիւններու ծանրութիւնը կրած մեր



Հայաստան-Սփիւռք 6-րդ համաժողովի բացման նիստին ելոյթ կ'ունենայ նախագահ Սերժ Սարգսեան

երկիրն ու ժողովուրդը կարենալ ամուր քայլերով ընթանալ վերելքի ուղիով, որ կը պահանջէ ուժերու ու կարողութիւններու ամբողջական կեդրոնացում ու համախմբում: Նախագահ Սերժ Սարգսեանի ողջունելէ ետք համաժողովի մասնակիցները, իր ելոյթի ընթացքին առաջարկեց այս համաժողովը օգտագործել որպէս Հայաստան-սփիւռք ռազմավարական

երկխօսութեան հարթակ, ուր միասնականութեան եւ բազմակարծութեան ոգով տեղի ունեցող քննարկումներու արդիւնքով ծնին ապագային միտուած նոր գործողութիւններու ծրագիրներ՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի համայնքներու զարգացման ու հզօրացման համար:

Շար.ը էջ 5

## Ժողովրդային Շքեղ Փառատօնով Նշուեցաւ Հայաստանի Անկախութեան 26րդ Տարեդարձը

Անցեալ Կիրակի, Սեպտեմբերի 17ին հազարաւոր հայեր փութացած էին Կլենտօնի «Վերտիկո Փարք» զբօսայգին, մասնակցելու համար Հայաստանի Անկախութեան 26րդ տարեդարձին նուիրուած ժողովրդային շքեղ փառատօնին:

Արդարեւ, Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը գեղեցիկ աւանդութիւն մը ստեղծած էր 19րդ տարին ըլլալով, կազմակերպելու իր տեսակին մէջ մեր գաղութի միակ մոռացումը, ստեղծելով արտակարգ ոգեւորութիւն ժողովրդային լայն շրջանակներու մէջ: Բառին բովանդակ իմաստով իսկական տօնախմբուին մըն էր, հայրենաբաղձ սիրտով այս հիւրընկալ ամբողջութիւնը վրայ ապաստան գտած մեր ազգակիցներուն համար:

Ամբողջ օրը զբօսայգին կարծէք ուխտատեղի մը եղած էր, կամ փոքրիկ Հայաստան մը: Ամենուրեք ակներեւ էին տօնական մթնոլորտ ստեղծող զանազան երեւոյթներ եւ յարմարութիւններ ամէն տարիքի աչքեւորներուն համար:

Տասնեակ մը գունազեղ տաղաւարներու մէջ վաճառքի եւ ցուցադրութեան դրուած էին այլազան իրեղեններ, յուշանուէրներ, հայաստանեան եւ դարաբաղեան արտադրութիւններ, գորգեր, զարդեղէններ, ուտելիք եւ այլն: Առանձ-



Տեսարան մը Հայաստանի Անկախութեան 26-րդ տարեդարձին նուիրուած ժողովրդային շքեղ փառատօնէն

նապէս ուշադրաւ էին հայկական համադամ ճաշերու եւ մանկապատանեկան ժամանցի խաղերու տաղաւարները: Մէկ խօսքով համատարած հայաբոյր մթնոլորտ մը գեղատեսիլ պուրակին մէջ, լի երգով ու երաժշտութեամբ:

Այս առթիւ գործադրուեցաւ օրուան տօնախմբութեան պատշաճ յայտագիր մը, գոր ձեռնհասօրէն վարեց ՆՍՄՄ-ի վարչութեան անդամներէն Անի Մարսէլեան, մէջ ընդ մէջ արտասանելով նաեւ Հայաստանին նուիրուած անուանի

բանաստեղծներու ստեղծագործութիւններէն:

Ձեռնարկի կազմակերպիչ Մարմնի՝ Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան հրաւիրեց ժողովուրդը յոտնկալա ունկնդրելու ԱՄՆ-ի եւ Հայաստանի քայլերդները, ապա ան ինդրեց ժողովուրդէն մէկ վայրկեան լուրթեամբ յարգել նախորդ փառատօնին գլխաւոր կազմակերպիչներէն՝ Կէրի Սինանեանի

Շար.ը էջ 5



ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Կարէն Կարապետեանի Խոշոր Սադրանքը Սերժ Սարգսեանի Դէմ

ՅԱԿՈՒ ԲԱՂԱԵԱՆ

Հայաստանում աշխոյժ քննարկում եւ զգալի հանրային ուշադրութիւն է գրաւել վարչապետ Կարէն Կարապետեանի մի յանձնարարութիւն, որ նա տուել է կրթութեան ու գիտութեան դաշնակցական նախարար Լեւոն Մկրտչեանին: Խօսքը Հայաստանում ուսանողների զարգացման հայեցակարգի մասին է: Այն օտար լեզուների զարգացման հայեցակարգից առանձին է:

Կարէն Կարապետեանի այդ յանձնարարականն առաջացրել է աւանդական մտահոգութիւնը, կապուած Ռուսաստանի կայսերական քաղաքականութեան հետ, որի առանցքային գործօններից կամ գործիքներից մէկն է լեզուն:

Ռուսաստանի տարբեր կարգի պաշտօնեաներ տարբեր առիթներով արուել են յայտարարութիւններ, որոնք վկայում են Հայաստանում ուսանողների յատուկ կարգավիճակ սահմանելու Ռուսաստանի ցանկութիւնը՝ ընդհուպ պետական լեզու կարգավիճակ:

Հաշուի առնելով այդ յայտարարութիւնները, որ հնչել են տարբեր տարիներին, Կարէն Կարապետեանի յանձնարարականը դիտուում է Ռուսաստանի այդ յաւակներէն բաւարարմանն ուղղուած մի քայլ, որն իր մէջ չի պարունակում ճակատագրական ելքեր, բայց ենթադրում է խնդրի խորացում, Ռուսաստանի կայսերական քաղաքականութեան եւ յաւակներէնների սպասարկման միտում:

Կարէն Կարապետեանը Ռուսաստանին չէ, որ ծառայութիւն է մատուցում, այլ հենց իրեն, իր քաղաքական հեռանկարին, իր ներքաղաքական, ներխոնական հեռանկարին:

Հայաստանի իշխանութեան վերադասաւորման գործընթացում, ներհամակարգային խնդիրների,

Սերժ Սարգսեանի ճակատագրի, նոր ստատուս-քոնցի՝ ներքին ուժերի նոր յարաբերակցութեան հարցում առանցքային նշանակութիւն ունեցող գործօնը ոչ այնքան որեւէ սուբիեկտի ներքին, որքան արտաքին «լեզուի մտութիւնն» է: Այդ հարցում առանցքային գործօնները ից մէկը հանդիսանում է Հայաստան-ԵՄ շրջանակային նոր համաձայնագիրը, որն ինչպէս բաւական դիպուկ բնորոշել էր Հայաստանում Ֆրանսայի արդէն նախկին դեսպան Շարպանտիեն՝ կը նպաստի տարածաշրջանում հաւասարակշռութեան ապահովմանը:

Աներկբայ է, որ այդ համաձայնագիրը Սերժ Սարգսեանը դիտարկում է որպէս Եւրամիութեան, Արեւմուտքի հետ իր քաղաքական ծրագրերի բանակցման խաղաքարտ: Այդ առումով Սերժ Սարգսեանի համար ստորագրել-չստորագրելը չի պարունակի ճակատագրական ռիսկեր, սակայն կարող է բերել զգալի խնդիրների եւ խառնել այսպէս ասած ծրագրերը: Իսկ եթէ Սերժ Սարգսեանին չաջողուի Եւրամիութեան հետ շրջանակային համաձայնագիրը կեանքի կոչել, ապա նա գործնականում կը կարողանայ ապահովել թէկուզ ֆորմալ իմաստով բացառիկ կարգավիճակ՝ նախագահ, որը կարողացել է մի կողմից ԵՄ անդամութեան պարագայում, միւս կողմից շրջանակային համաձայնագիր ունենալ Եւրամիութեան հետ:

Այդ կարգավիճակը էսպէս կ'ամրացնի Սերժ Սարգսեանի դիրքերը ներհամակարգային գործընթացում, ապահովելով արտաքին լեզուի մտութեան զգալի պաշար: Դա կը նշանակի, որ Կարէն Կարապետեանին եւ նրա ֆինանսա-քաղաքական հովանաւոր, իսկ այժմ արդէն նոյնիսկ սանահայր Սամուէլ Կարապետեանին այդքան էլ հեշտ չի լինի զուտ ֆինանսա-

կան լծակի միջոցով Սերժ Սարգսեանին գրկել իշխանութեան «հսկիչ փաթեթից»: Ըստ այդմ, ԵՄ հետ շրջանակային համաձայնագրի հարցում խնդիր առաջացնելու դէպքում Սարգսեանը խնդիր կ'ունենայ նաեւ իշխանութեան «հսկիչ փաթեթը» պահելու հարցում:

Ներկայում Սարգսեանն ու Եւրամիութիւնը յայտարարում են, որ չկայ ստորագրմանը խոչընդոտող պատճառ: Ստորագրութիւնը նախատեսուած է Նոյեմբերին՝ Բրիւսելի Արեւելեան գործընկերութեան Վեհաժողովում:

Առանցքային ռիսկ կամ խոչընդոտ դիտուում է Ռուսաստանը, որի իշխանութեան հենց կայսերական յաւակներէն կարող է հերթական անգամ զոհ գնալ հայեւրոպական շրջանակային փաստաթուղթը, եթէ անգամ էսպէս տարբերում է առաջին՝ Ասոցացման պայմանագրից եւ ենթակա է ԵՄ պայմանագրի դրոյթներին: Ռուսաստանի տրամադրութեան հանդէպ չափազանց զգայուն է ոչ միայն Սերժ Սարգսեանը, այլ նաեւ Բրիւսելը, ինչի մասին վկայում է օրերս ԵՄ դեսպան Սվիտալկո յայտարարութիւնը:

Այդ իրավիճակում առանցքային է դառնում Ռուսաստանին այսպէս ասած «չգրգռելը»: Ամենեւեւ պատահական չէ, որ ԵՄ-ից դուրս գալու վերաբերեալ ԵԼԲ դաշինքի նախաձեռնութեանն ի պատասխան ՀՀԿ-ն այսպապ ձեռնամուխ եղաւ ԵՄ-ին հաւատարմութեան երդման, Մոսկուային կասկածի դոյզն իսկ տեղ չտալու համար, ինչը կարող էր բերել ԵՄ հետ համաձայնագրի հարցում Ռուսաստանի «քմահաճոյքի»:

Չհրաքարէն է այդ երդմամբ Սերժ Սարգսեանը Նոյեմբերի համաձայնագրի հանդէպ այդ վտանգը, թէ՛ ոչ, անորոշ է, կ'երեւայ վերջին պահին, սակայն աներկբայ է, որ նոր վտանգ է առաջանում

ուսանողների զարգացման հայեցակարգի նախաձեռնութեամբ, որով հանդէս է եկել Կարէն Կարապետեանը:

Այդ նախաձեռնութիւնը Հայաստանում առաջացնում է հակառուսական հանրային-քաղաքական տրամադրութեան նոր ալիք՝ ընդ որում արդարացի, թէեւ այդ կապակցութեամբ կարծիքները կարող են լինել տարբեր: Սակայն կայ փաստը՝ ալիքն առաջանում է, եւ թերեւս ամենեւեւ դժուար չէր կանխատեսել դրա առաջացման մեղմ ասած մեծ հաւանականութիւնը: Իսկ դա էլ իր հերթին առաջացնելու էր հանդիպակաց տրամադրութիւն Ռուսաստանում: Դժուար է ասել, այն կը հասնի՞ մինչեւ կրեմլ՝ քաղաքական որոշման կայացման մակարդակի, թէ ոչ, բայց հանդիպակաց տրամադրութիւնն էլ անխուսափելի է, եւ ամենեւեւ դժուար չէր պատկերացնել կամ կանխատեսել նաեւ այդ արձագանքը:

Հետեւաբար հարց է առաջանում, այդ բաւականին հեշտ կանխատեսելիութեան պայմաններում ուսանողների զարգացման բացարձակապէս հրամայական, անհրաժեշտութիւն չհանդիսացող՝ նաեւ իր մէջ ազգային-պետական ինքնութեան ու արժանապատուութեան վտանգի տարրեր պարունակող յանձնարարականն ի՞նչ է, եթէ ոչ սադրանք: Սադրանք Հայաստան-ԵՄ շրջանակային համաձայնագրի ստորագրման դէմ, որի նպատակն է դրա շէմին առանց այդ էլ դիւրագրգիռ Ռուսաստանին «գրգռելն» ու այդ համաձայնագրի ստորագրման դէմ տրամադրուելու առնուազն էմոցիոնալ ֆոն ստեղծելը:

«ԼՐԱԳԻՐ»

Պարուն Պատրաստում է Մօտալուտ Պատերազմի

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

Այսօր Ատրպէյճանի բանակը սկսել է 15 հազար անձնակազմով խոշոր վարժանքները: Զօրավար-ժուլետեան մեկնող շարասեան մէջ փորձագէտները նկատել են չեխական արտադրութեան 152 մմ տրամաչափի DANA ինքնազանց հրետանային համակարգեր (ԻՀՀ) եւ 122 մմ տրամաչափի RM-70 համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր (ՀԿՌՀ): Ատրպէյճանի ԶՈՒ չեխական արտադրութեան «Դա-նա» ԻՀՀ-ներ DANA ինքնազանց հրետանային համակարգի առաւելագոյն հեռահարութիւնը շուրջ 19 կմ է: Արդիականացուած տարբերակի հեռահարութիւնը կարող է հասնել մինչեւ 25.5 կմ-ի: Համակարգը կշռում է շուրջ 29 տոննա, շարժման առաւելագոյն արագութիւնը՝ 80 կմ/ժ: Դատելով հրապարակուած տեսանիւթից եւ լուսանկարներից՝ Ատրպէյճանը գնել է 2016 թ. արդիականացուած Dana M1M հատուկիցներ:

Չեխիան նախատեսում էր 33 միւս արդիականացնել միայն 2018-20 թթ-ին, փաստօրէն՝ յատուկ Ատրպէյճանի համար որոշակի քանակութիւն աւելի սեղմ ժամկէտներում է արդիականացուել: Դատելով սրանից՝ կասկած չի մնում,

որ Ատրպէյճանը գնումը կատարել է հենց Չեխիայից եւ ոչ թէ որեւէ երրորդ երկրից: Այս տեղեկատուութիւնը յուշում է, որ պատերազմի սանձազերծումն Ատրպէյճանի պարագայում ոչ միայն քարոզչական շանտաժ է, այլ առաջին հերթին՝ իրական քաղաքականութիւն: Պաքուում պատրաստուած են մօտալուտ պատերազմի, այլապէս գոնէ կարող էին սպասել մինչեւ 2018-20 թթ-ը, երբ Չեխիան կ'արդիականացներ Dana M1M հատուկիցները:

Ընդ որում, Ատրպէյճանի իշխանութիւնների վարքագիծն աւելի անկանխատեսելի է դարձել կոռուպցիոն վերջին սկանդալից յետոյ, երբ արեւմտեան կոշտ արձագանքներն ու ճնշումները Պաքուին ամբողջովին նետում են Մոսկուայի գիրկը՝ ճանապարհ բացելով ռուս-ատրպէյճանական 2015-16 թթ-ի համաձայնութիւնների վերակենդանացման համար:

Անցած տարի դա վերջացաւ քառօրեայ պատերազմով, մօտ ապագայում այդ հեռանկարը բացարձակապէս չի բացառուում, եթէ հաշուի առնենք նաեւ այն հանգամանքը, որ Արեւմուտքի եւ Ռուսաստանի որակապէս նոր հակադրութիւնն աւելի թուլացրել է փրկուել խաղաղութեան ապահովման միջազգա-

յին երաշխիքները: Սակայն խնդիրն ունի մէկ այլ ուշադրաւ կողմ:

Օրեր առաջ Սերժ Սարգսեանը խորհրդակցութիւն էր հրաւիրել՝ հայ-չեխական տնտեսական յարաբերութիւնների թեմայով, որի ընթացքում բարձր գնահատականի արժանացեց Երեւանի եւ Պրահայի քաղաքական յարաբերութիւնները՝ խօսելով նաեւ օգտակար փոխայցեութիւնների մասին: Սա է մեր դիւանագիտութեան որակը, երբ յաճախ մեր պաշտօնեաներն պետական այցերը շփոթում են տուրիզմի եւ հանգստի հետ: Երբ մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանը սպառազինում է Ատրպէյճանին, անհասկանալի է, թէ այդ դէպքում Հայաստանն ինչ է անում ԵՄ-ում կամ ՀԱՊԿ-ում:

Եթէ հայ-չեխական յարաբերութիւնները բարձր մակարդակի վրայ են, անհասկանալի է, թէ ինչո՞ւ է Չեխիան Ատրպէյճանի համար աւելի սեղմ ժամկէտներում սպառազինութիւն արդիականացնում: Եթէ սա է բարձր մակարդակի յարաբերութիւնները, ապա պատկերացնել կարելի է, թէ միւս պետութիւնները, որոնց հետ չկան յատուկ յարաբերութիւններ, ինչ քաղաքականութիւն են իրականացնում Հայաստանի եւ ԼՂ հարցում: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ  
ՍՈՅՒԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱՎԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԵ ԱՏԱՊԱՅԵԱՆ  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY



ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վարչապետը Բաւարարուած է Կառավարութեան Գործունէութեամբ

«Ուղղութիւնը, որով մենք գնում ենք, մեզ որոշ չափով բաւարարում է»։ - այսպէս գնահատած է վարչապետ Կարէն Կարապետեան իր գլխաւորած կառավարութեան գործունէութեան մէկ տարին:

«Ինչ վերաբերում է, թէ ինչպէս է զգում մեր քաղաքացին, մենք ներկայացրել ենք մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք, ոչ մեր գնահատականով, թէ՛ տարածաշրջանում, թէ՛ ԵԱՏՄ-ում, թէ՛ ԱՊՀ-ում, թէ՛ մեր ռեկիոնում այսօր, ներողութիւն եմ խնդրում եմ թէ՛ անհամեստ հնչի, լաւագոյնն է: Դա նշանակում է, որ մենք մեր բոլոր խնդիրները լուծել ենք: Ի հարկէ ոչ: Որովհետեւ գործնական մենք չունենք քաղաքացի, որը իր կեանքի որակը չի ուզում բարելաւի, եւ այնպէս չի ստացուելու, որ մէկ տարուայ մէջ մենք բոլորի խնդիրները, բոլորի սպասումները բաւարարելու ենք: Բայց ուղղութիւնը՝ ոնց ենք գնում, կարծում եմ, այս պահին մեզ որոշ չափով բաւարարում է»:

Վարչապետը անդրադարձած է նաեւ Հայաստանը Եւրասիական տնտեսական միութեանն ղուրս բերելու ընդդիմադիր «ԵԼՔ» խմբակցութեան առաջարկին, վարչապետը հակադարձած է տնտեսական



Վարչապետ Կարէն Կարապետեան ցուցանիշներով. - «Ինչո՞վ է ԵԱՏՄ-ն լաւ. դա մեր մակրոտնտեսական ցուցանիշներն են: Ի՞նչ կը լինէր, եթէ ԵԱՏՄ-ում չլինէի՞րք. այդ վերլուծութիւնը հնարաւոր է անել, բայց ես իրականում չեմ տեսնում այլ շուկաներ, որտեղ մենք կորցրել ենք ԵԱՏՄ ակումբի անդամ լինելով, ուղղակի անտեղի է: Դիրքորոշումը պետութեան պարզ է, որեւէ փոփոխութիւն այդտեղ տեղի չի ունեցել: Ցաւում եմ, որ նման երեւոյթ տեղի ունեցաւ: Ես կարծում եմ, որ ցուցահանդէսը ի հարկէ պէտք է դառնայ աւելի լայն, տարածման հնարաւորութիւն ունենայ»:

Ըստ Զարուհի Փոստանձեանի Կառավարութիւնն ու Քաղաքապետարանը Իւրացուցած են 50 Միլիոն Տոլար

Երեւանի աւագանիի «Երկիր Ծիրանի» խմբակցութեան ղեկավար Զարուհի Փոստանձեան վարչական դատարան երկու հայց ներկայացուցած է, բողոքարկելով կառավարութեան ու մայրաքաղաքի աւագանիի որոշումները հայաստանեան խոշորագոյն հարկատուներէն մէկուն՝ «Սփայթա» ընկերութեան Երեւանի մէջ հսկայական հողատարածք նուիրելուն վերաբերեալ:

«Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ընդդիմադիր գործիչը իշխանութիւններու քայլը բնորոշած է որպէս քրէօրէն հետապնդելի արարք, պնդելով, որ երկրի ղեկավարներուն հետ սերտ կապեր ունեցող ընկերութեան շուկայական արժէքով մօտ 50 միլիոն տոլար արժողութեամբ նուէր տալը հանրութեանն ծածուկ նախապատրաստուած է:

Ըստ Փոստանձեանի, այս Յունիսի 16-ին Երեւանի աւագանին արտահերթ նիստ հրաւիրած է, որուն ժամանակ քաղաքին պատկանող 83 միաւոր հողակտորներ մտցուած են օտարման ենթակայ ցանկին մէջ: Ընդ որում, նոյն օրն ալ «Սփայթա» ընկերութիւնը ներդրումային ծրագիր ներկայացուցած է այդ հողակտորներէն երկուքին հետ կապուած:

Քաղաքապետ Տարօն Մարգարեան բաւարարած է «Սփայթա»-ի խնդրանքը, դիմած է կառավարութեան, որպէսզի գործադիրը թոյլ տայ հողակտոր նուիրաբերել ընկերութեան:

Կառավարութեան այս Յունիսի 23-ի նիստին, աւագանիի որոշումէն ընդամէնը 7 օր անց, հաւանութեան արժանացած է Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանի ներկայացուցած նախագիծը՝ «Սփայթա» եւ «Արմասիոտաքթ» ընկերութիւններուն հողակտորներ նուիրաբերելու մասին, եւ համա-



«Երկիր Ծիրանի» ղեկավար Զարուհի Փոստանձեան

պատասխան որոշմամբ ընդհանուր առմամբ 163.2 հեքթար տարածքով երկու հողակտոր նուիրաբերուած է, որոնց արժէքը կը կազմէր շուրջ 10 միլիոն տոլար: Ընդ որում, կառավարութեան որոշմամբ, կապիտոլները կրնան օգտագործուել բացառապէս Չերմոցային համալիրի եւ բորբոսով պանիրի գործարանի կառուցման նպատակով:

«Կառավարութիւնը եւ քաղաքապետարանը թոյլ են տուել քրէօրէն հետապնդելի արարքներ, քանի որ, չունենալով օրինական ուժի մէջ մտած իրաւական ակտ, այդ ակտի հիման վրայ նրանք գործառոյթներ են իրականացրել թէ՛ որոշման կայացման միջոցով, թէ՛ յատուկ գործողութիւնների միջոցով: Եւ իւրացրել են երեւանցիները շուրջ 50 միլիոն տոլարի, շուկայական գինն է այդ հողակտորիզգգ փաստացի իւրացում է տեղի ունեցել»:

Երեւանի քաղաքապետարանի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան պետ Արթուր Գէորգեան «Ազատութեան» ընդամէնը փոխանցած է. - «Զարուհի Փոստանձեանի իրաւունքն է, կարող է դիմել դատարան»:

Փաշինեան.

«Հայաստան-Սփիւռք Համաժողովը Կը Միտի Սերժ Սարգսեանի PR-ի Վերածուիլ

Ընդդիմադիր «ԵԼՔ» դաշինքը չի մասնակցիր Երեւանի մէջ մեկնարկած Հայաստան-Սփիւռք 6-րդ համաժողովին, որովհետեւ դաշինքի կուսակցութիւնները, ինչպէս նաեւ ԱԺ կամ Երեւանի աւագանիի խմբակցութեան անդամները համաժողովին մասնակցելու հրաւերներ չեն ստացած, ինչպէս նաեւ չեն հրաւիրուած Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն վերաբերեալ դաշինքի մօտեցումները յայտնելու: Այդ մասին իր ֆէյսպուքեան էջին վրայ գրած է Ազգային ժողովի «ԵԼՔ» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեան:

Այս եւ քանի մը այլ փաստեր, ըստ Փաշինեանի, «գալիս են վկայ-

ելու, որ միջոցառումը միտուած է Սերժ Սարգսեանի PR աղցիայի վերածուելու»:

Յիշեցնելով, որ «ԵԼՔ»-ի նախընտրական ծրագրի կարեւորագոյն կէտերէն մէկը Սփիւռքի համայնքներու ներկայացուցչներէ կազմուած Հայաստանի խորհրդարանի երկրորդ պալատի ստեղծումն է, դաշինքի խորհրդարանական խմբակցութեան ղեկավարը գրած է. - «Այս ծրագիրը պատրաստ ենք քննարկել Սփիւռքի բոլոր կառույցների հետ եւ ձեռնամուխ լինել համապատասխան սահմանադրական փոփոխութիւնների փաթեթի նախապատրաստմանը»:

Գալուստ Սահակեան. «Արտագաղթի Սեղաւորը Ժողովուրդն է, Որ Չի Գնահատեր Անկախութիւնը

2018-ի Ապրիլի 9-էն ետք Հայաստանի վարչապետը պէտք է Սերժ Սարգսեան ըլլայ,- այսօր յայտարարած է Ազգային ժողովի նախկին նախագահ Գալուստ Սահակեան. «Ուրիշ երկրորդ մարդ չկայ»:

Վարչապետի թեկնածուն պիտի առաջարկէ Հանրապետականը եւ, ըստ պարոն Սահակեանի, յաջորդ տարուայ Ապրիլին Հանրապետականը չի կրնար չառաջարկել Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը:

Հանրապետականի կազմին շատ շատ են անոնք, որոնք նոյնպէս կ'ուզեն, որ յաջորդ տարի վարչապետ դառնայ ոչ թէ Կարէն Կարապետեան, այլ Սերժ Սարգսեան. «Ոչ միայն հիմնական գործադիր մարմինը, այլ ընդհանրապէս, որոնք նաեւ տեղերում կուսակցական կազմակերպութիւն են, դրանց հիմնական մասը ձգտում է դրան»:

Ռուզաննա Եղուկեան.

«Քաղաքական Բանտարկեալներ Ունենալը Ամօթ է, Իսկ Իրենց Գոյութեան Մասին Բարձրաձայնելը Ամօթ է»

Սեպտեմբեր 19-ին Հանրապետութեան հրապարակէն բերման ենթարկուած ու քանի մը ժամ ետք ազատ արձակուած են Կարօ Եղուկեանի ընտանիքի անդամներն ու անոր աջակիցներէն երկուքը:

«Սասնայ Շուքու» գործով անազատութեան մէջ գտնուող Եղուկեանի կինը, դուստրերը, որդին եւ անոնց աջակիցները թուրքիկներ բաժնած են Հայաստան-Սփիւռք համաժողովի մասնակիցներուն, դիմաւորելով զանոնք հիւրանոցին մօտ:

Անոնք Կարօ Եղուկեանի եւ Ժիրայր Սեֆիլեանի նկարներով թուրքիկներու միջոցով փորձած են համաժողովի մասնակիցներու շարքերէն հրաւիրել Հայաստանի մէջ քաղաքական բանտարկեալներու առկայութեան վրայ:

Կարօ Եղուկեանի կինը՝ Ռուզաննա Եղուկեան «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է. - «Եկաւ ոստիկաններից մէկը, ասաց՝ ամօթ ա հստեղ կանգնելը: Ասացի՛ ի՞նչն ա ամօթ... Քաղաքապետարկեալներ մի երկուսը ունենալը ամօթ չի, իսկ իրենց գոյութեան մասին բարձրաձայնելը ու իրագրելը ամօթ ա համարուում»:

Սերժ Սարգսեանի վարչապետութեան դէմ որեւէ հանրապետական այսօր չի ճանչնար պարոն Սահակեան: Եւ չի կարծեր, որ կէս տարի առաջ Հանրապետականի այսպիսի դիրքորոշումը կրնայ սոսնձութիւն պատճառել կուսակցութեան երկրորդ դէմքին՝ Կարէն Կարապետեանին. «Սերժ Սարգսեանը պետութեան մէջ միակ մարդն է, որը ունի քաղաքական միաւոր, կուսակցութիւն, մնացածը՝ ոչ էսօրուայ վարչապետը, ոչ Գալուստ Սահակեանը, ոչ միւսը... ամբողջական թիմ էրպիսիս է ունենք»:

Պատասխանելով այն հարցին, թէ Սերժ Սարգսեանի մնալով Հայաստանէն պիտի արտագաղթէ եւս 350 հազար անձ, Գալուստ Սահակեան նշած է, որ իր ղեկավարը մեղաւոր չէ, մեղաւորը ժողովուրդն է, որ տակաւին չի գնահատեր անկախութիւնը:



Երեք ժամ ոստիկանութեան մօտ պահելէ ետք բերման ենթարկուածներուն տեղեկացուցած են, որ գիրենք բոլորովին այլ կասկածանքով տեղափոխած են ոստիկանութեան բաժին:

Իրաւապաշտպան Վարդան Յարութիւնեանի գնահատմամբ, վերջին տարիներուն ոստիկանութիւնը կը զբաղի ոչ թէ յանցաւորութեան դէմ պայքարելով, այլ քաղաքական գործընթացներուն միջամտելով. - «Ե՛ւ Կարօ Եղուկեանի ընտանիքի անդամներին բերման ենթարկելը, եւ նրա համակիրներին բերման ենթարկելը կարելի է որակել միայն որպէս սաղորանք»



ԼՈՒՐԵՐ

«Միայն ժողովրդավարական Թուրքիան կրնայ ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը»  
Կարո Փայլանի Ելոյթը Երեւանի Մէջ



Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր Կարո Փայլան Ելոյթ կ'ունենայ Հայաստան-Սփիւռք համաժողովի քննարկումներէն մէկուն ընթացքին

Սեպտեմբերին 19-ին, Հայաստան-Սփիւռք համահայկական 6-րդ համաժողովի ծիրին մէջ կազմակերպուած «Հայոց Ցեղասպանութեան ճանաչում, ցեղասպանութիւնների կանխարգելում, քաղաքական եւ իրաւական գործընթացները» թեմայով քննարկման ժամանակ Թուրքիոյ Հանրապետութեան խորհրդարանի Հայ պատգամաւոր Կարո Փայլան յայտարարեց, որ առանց Ցեղասպանութիւնը ճանչնալու, Թուրքիա երբեք ժողովրդավարական պետութիւն պիտի չդառնայ, ոչ ալ քրտական հարցը լուծում պիտի ստանայ»:

«Ցեղասպանութեան ճանաչման համար առաւել լայն տեսլական պէտք է ունենանք, միայն ժողովրդավարական Թուրքիան կրնայ ճանչնալ Ցեղասպանութիւնը, միայն ժողովրդավարական Թուրքիան կրնայ բանալ սահմանները Հայաստանի հետ, հակառակ պարագային մենք ստիպուած պիտի ըլլանք եւս տասնեակ տարիներ սպասել:

Թուրքիա ներկայիս կրկին մուտք ժամանակաշրջան կ'ապրի,

102 տարի առաջ մեծ ոճիր տեղի ունեցաւ, եւ այն կը շարունակուի այսօր, քանի որ իւրաքանչիւր ոճիր, որ անպատիժ կը մնայ, նոր ոճիր կ'առաջացնէ: Անձամբ պիտի շարունակեմ պայքարիլ Ցեղասպանութեան ճանաչման համար», - ըսաւ հայագրի պատգամաւորը:

Կարո Փայլանի խօսքով, Թուրքիա այսօր կը հեռանայ ժողովրդավարութենէն, յետընթաց կ'ապրի նաեւ ԵՄ-ի հետ յարաբերութիւններուն մէջ: Անոր կարծիքով, Թուրքիոյ նոր Սահմանադրութեան ընդունումը նոյնպէս կը նշանակէ հեռացում ժողովրդավարութենէն. «Ես ճիշդ ասոր մասին խօսած եմ խորհրդարանին մէջ, ըսած եմ, որ մեծ սխալ տեղի ունեցած է: 20-րդ դարու սկիզբը տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութիւնը, անձամբ խորհրդարանին մէջ ըսած եմ, որ եթէ երկրին մէջ ընդունուի նոր Սահմանադրութիւն, նոյն աղէտը պիտի ունենանք, այսօր ճիշդ այդ ճամբուն վրայ ենք: Թուրքիա 100 տարի անց ալ կը շարունակէ ոճիր գործել»:

Սուրիահայ Շատ Մը Ընտանիքներ Կերադարձած են Սուրիա. Հայ Պատգամաւոր

Շատ սուրիահայեր, որոնք պատերազմի ընթացքին տեղափոխուած էին այլ երկիրներ, կամաց-կամաց կը վերադառնան Սուրիա: Այս մասին այսօր? 18 Սեպտեմբերին, լրագրողներու հետ զրոյցի ընթացքին յայտնած է Սուրիոյ խորհրդարանի Հայ պատգամաւոր Ժիրայր Ռէիսեան:

Հայ պատգամաւորին խօսքով, պատերազմի ծանր տարիներէն ետք Սուրիա կը վերականգնուի:

«Սուրիահայերը պատերազմի տարիներուն տեղափոխուած էին տարբեր երկիրներ, ես այս գաղթ չեմ համարեր, այլ տեղափոխութիւն: անվտանգութենէ ելլելով: Մարդիկ ոչ միայն երկրէն դուրս եկած են, այլև վտանգի մէջ գտնուող քաղաքներէն առաւել անվտանգ վայրեր տեղափոխուած էին: Այժմ տեղեկութիւններ ունիմ, որ շատ սուրիահայեր վերադարձած են Հալէպ, այդ թուին, եւրոպական երկիրներէ, Հայաստանէն, անգամ Աւստրալիայէն ընտանիքներ կան, որոնք վերադարձած են: Իհարկէ, խնդիրներ կան, սակայն պայման-



Սուրիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր Ժիրայր Ռէիսեան

ները կը բարելաւուին», - յայտնած է Ժիրայր Ռէիսեան:

Հայ պատգամաւորը յոյս ունի, որ յառաջիկային վերադարձողներն աւելի շատ պիտի ըլլան, քանի որ երկիրը կը կայունանայ: Ժիրայր Ռէիսեան յայտնած է նաեւ, որ Հալէպի մէջ ներկայիս կը բնակի մօտ 18 հազար հայ, իսկ ամբողջ երկրի հայերու թիւը կը հասնի շուրջ 28 հազարի:

Ստեփանակերտ Կը Հակադարձ Ելայանտեանի. «Կարելի Չէ Կերադառնալ Նախկին Սահմաններուն»

Երեւանին մէջ մեկնարկած Հայաստան-Սփիւռք համահայկական համաժողովին ունեցած ելոյթի ժամանակ, անդրադառնալով դարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման, Հայաստանի Արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան ըսած էր. «Խօսքը գնում է այն տարածքների վերադարձի մասին, որոնց վերադարձի դէպքում այս ամբողջ հիմնախնդրի կարգաւորմանը եւ անվտանգութեան համակարգին վնաս չի հասցուելու եւ սպառնալիքի տակ չի դնելու հանգուցալուծումը:

Արձագանգելով Հայաստանի Արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեանի արձկայարոյց յայտարարութեան՝ Ատրպէյջանին տարածքներ վերադարձնելու հնարաւորութեան մասին, Ստեփանակերտ ընդգծած է, որ նախկին սահմաններուն վերադառնալն անհնար է:

Լեւոնային Ղարաբաղի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Դաւիթ Բաբայեան «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ նշած է. «Վերադարձ անցեալին չկայ: Թէ՛ սահմանների

առումով, թէ՛ կարգավիճակի: Ամենա կարեւոր, առանցքային բաղադրամասն այստեղ անվտանգութեան խնդիրն է: Միշտ ասել ենք, որ նախկին ԼՂԻՄ-ի սահմանները, ԼՂՀ 1991 թուականի սահմաններն ի վիճակի չեն ապահովել Արցախի Հանրապետութեան անվտանգութիւնը: Եթէ անվտանգութիւնը թուլանայ, նրանք անմիջապէս յարձակուելու են մեր վրայ»:

Դաւիթ Բաբայեան նշած է նաեւ, որ եթէ Պաքուի մէջ կը ցանկան խօսիլ տարածքներու մասին, ուրեմն պէտք է նախ եւ առաջ խօսիլ ատրպէյջանական բռնազաւթման ներքոյ գտնուող տարածքներուն մասին: «Ընդհանրապէս գիշում բառն ընդունելի չէ, եթէ Ատրպէյջանն ուզում է քննարկել... այդ դէպքում սահմանները շատ լայն քաթեկորիա են, այստեղ մտնում է Հիւսիսային Արցախը, Շահումեանը, Գետաշէնը, Մարտունաշէնը, Մարտակերտի, Մարտունու գրաւուած տարածքները եւ այլն: Սա այնքան մեծ հարց է, մօտ 25 հազար ք/քմ տարածքի մասին է խօսքը», - ըսած է Բաբայեան:

ԱՄՆ Սառեցուցած Է Ձեւքի Վաճառքը Թուրքիոյ Նախագահի Թիկնապահներուն

Ամերիկայի կառավարութիւնը սառեցուցած է գէնքի վաճառքը Թուրքիոյ նախագահ Էրտողանի թիկնապահներուն, վերջիններուս կողմէ Մայիսին Ուաշինգթոնի մէջ իրականացուած ծեծ ու բռնութենէն ետք, կը հաղորդէ «Ֆրանսըրէս»:

Ինչպէս հաղորդուած էր, որ Նիւ Համփշիրի մէջ գործող յայտնի «Sig Sauer» զինագործական ընկերութեան միջեւ կնքուած համաձայնագրի մասին է, որով նախատեսուած էր 1,2 միլիոն տոլարի գէնք վաճառել Թուրքիոյ նախագահի անձնական թիկնապահին: Զինագործական ընկերութիւններն օտար երկիրներ ապրանք արտահանած ժամանակ պարտաւոր են ստանալ պաշտօնական Ուասշինգթոնի հաւանութիւնը: Ամիսներ առաջ Թրամփի վարչակազմը Անգարայի հետ գործարքին չէր աւարկած: Քոնկրէսականներու գործադրած ճնշումներէն ետք սակայն, ստիպուած եղած է վերանայիլ այդ որոշումը: Հաղորդուած է, որ օրէնսդրական այս նախաձեռնութիւնը առաջ մղած են դեմոկրատական ճամբարի սենատորներ Քրիս Վան Հոլլըն եւ Փաթրիք Լիհի, ընդգծելով, որ «այդ քայլին շատոնց պէտք էր դիմել»:

«Նման հարց մեր կողմէ պէտք չէ անգամ քննարկուէր, մենք ոչ մէկ պարագայի կրնանք արտօնել գէնքի վաճառքը, հաշուի առնելով նախագահ Էրտողանի անձնական թիկնապահներու անցեալին գործադրած բռնութիւնները», - յայտարարած են փերակուտականները, աւելցնելով. «ԱՄՆ պէտք է սառեցնէ գէնքի վաճառքը նաեւ Թուրքիոյ ազգային ոստիկանութեան, որ կամայականօրէն կը ձերբակալէ եւ ուժ կը կիրառէ կառավարութիւնը քննադատող խաղաղ ցուցարարներուն նկատմամբ»:

ԱՄՆ Պետական Քարտուղարութեան որոշումը ողջունած են նաեւ հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչները: «Եթէ



Թուրքիոյ նախագահ Էրտողան եւ իր թիկնապահները

մենք արտօնէինք գործարքը, կը նշանակէր, որ հաւանութիւն կուտանք Թուրքիոյ անվտանգութեան ուժերու յարձակումներուն մեր հողին վրայ», - յայտարարած է Միչիկընէ նընտրուած Դէյլ Թրոթթ, աւելցնելով. «Հրաժարելով վաճառքէն, մենք յստակ ուղերձ կը յղեն քերտողանին, որ ան վեր չէ ամերիկեան օրէնքներէն»:

Թուրքիոյ նախագահական թիկնապահի անդամները ամերիկեան լրատուամիջոցներու առաջին էջերուն յայտնուած էին անցեալգարնան, երբ Էրտողանի Ուաշինգթոնի կատարած այցի օրերուն յարձակած էին Թուրքիոյ դեսպանի առանձնատան մօտ հաւաքուած խաղաղ ցուցարարներուն վրայ:


Էրտողանի դէմ կազմակերպուած այդ ցոյցն աւարտած էր արիւնալի բախումներով. 9 անձատուժած էր, միքանին հիւանդանոց տեղափոխուած էր:

Էրտողանի թիկնապահի մասնակցութեամբ Միացեալ Նահանգներու մէջարձանագրուած առաջին դէպքը չէր այս, բան մը, որ լուրջ հարցեր առաջ կը բերէ Թուրքիոյ անվտանգութեան ուժերու պահանջները վերաբերեալ», - կը գրէ «Associated Press» մամուլ գործակալութիւնը:



### Սենատորն ՊԷՆ Քարտին Առաջարկած է Պատժամիջոցներ Կիրառել Թուրքիոյ Դէմ

Ամերիկացի սենատոր Պէն Քարտին առաջարկած է պատժամիջոցներ կիրառել Թուրքիոյ դէմ Ռուսիայէն «C-400» զենիթահրթիռային համակարգերու գնման համար: Այս մասին կը գրէ «Politico» պարբերականը:



Սենատորի նամակն ուղարկուած է ԱՄՆ նախագահ Տոնալտ Թրամփի վարչակազմ, ուր վերջինս կը զգուշացնէ, որ Ռուսիայէն «C-400» զենիթահրթիռային համակարգերու գնումը կը խախտէ Ռուսիոյ նկատմամբ ԱՄՆ-ի սահմանած պատժամիջոցներու կիրառման ընթացակարգը:

«Ցաւալի է, որ ԱՄՆ-ի դաշնակից Թուրքիան կը համագործակցի Մոսկուայի հետ նման վճռորոշ ժամանակ», - աւելցուցած է Քարտին:

Ըստ Քարտինի, պատժամիջոցները պարտադիր են եւ «ուղղուած են Ռուսիան ետ պահելու ԱՄՆ-ի ու անոր դաշնակիցներուն վրայ յետագայ յարձակումներէ»:

Պարբերականը նշած է, որ Քրեմլինի կողմէ նիւթական օժանդակութիւն ստացող «Russia Today» եւ «Սփուլթիկ» լրատուական գործակալութիւնները գոր-

ծարքն անուանած են դիւանագիտական յեղափոխութիւն:

«Վերջին ամիսներուն Մոսկուա կ'աշխատէր այնպէս ընել, որ 1992 թուականէն ՆԱԹՕ-ի անդամ դարձած Թուրքիան հեռու մնայ իր արեւմտեան դաշնակիցներէն: Թուրքիոյ նախագահ Էրտողան յայտարարած էր, որ ՆԱԹՕ ինքզինք պէտք է մեղադրէ այս գործարքին համար, քանի որ այն կը դանդաղեցնէ իր պետութեան անհրաժեշտ սպառազինութիւն մատակարարելու գործընթացը», - նշուած է յօդուածին մէջ:

### Ժողովրդային Շքեղ Փառատօնով Նշուեցաւ

Շարունակուած էջ 1-էն

չիշատակը, անոր վաղահաս մահուան առթիւ, որ 18 տարիներ շարունակ անձուկէր եւ բժախնդիր աշխատանքով մեծ աւանդ ունեցած էր փառատօնի կազմակերպման եւ արձանագրած յաջողութեանց մէջ: Ապա իր բացման խօսքին մէջ ան ողջունեց ներկայ բազմահազար հայութիւնը եւ Հայաստանի անկախութեան 26րդ տարեդարձի բարեբափայտ առիթով իր շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները փոխանցեց ներկաներուն եւ Մայր Հայրենիքի ժողովուրդին:

Ողջոյնի խօսքերով յաջորդաբար հանդէս եկան Գալիֆորնիոյ նահանգային Խորհրդարանի անդամ Լաուրա Ֆրիտման, ծերակուտական Անթոնիօ Փորթանթի-

եւ հռչակագիր մը յանձնեց ՆՍՄՄ-ին: Սրտի խօսքերով հանդէս եկան նաեւ Լոս Անձելէսի գաւառի վերակազմակերպիչ եւ Ուսումնական Խորհուրդներու Ներկայացուցիչները որոնք իրենց բարեմաղթութիւններն ու շնորհաւորութիւնները փոխանցեցին ներկայ հասարակութեան: Հիւրերը ներկայացնողն էր ՀԱՍ-ի անդամ Քրիսթին Ադախանին:

Փառատօնի առթած խանդավառ մթնոլորտը իր գագաթնակէտին հասաւ գեղարուեստական ճոխ յայտագրի գործադրութեամբ: Յաջորդաբար իրենց ելոյթներով ներկաները ոգեւորեցին ջութակահար Մերուժան Մարգարեանը, «Լիլիա» պարախումբը (գեղարուեստական ղեկավար Լիլիա Մարգարեան), Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբը (գեղ. ղե-



նօ, որ այս առթիւ հռչակագիրներ յանձնեց «Կայծ» Երիտասարդաց Միութեան, Հայ Ամերիկեան Խորհուրդին եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան, ԱՄՆ-ի գոնկերէսի անդամ Ատամ Շիֆի ներկայացուցիչ Մարիա Յովակիմեան, Կլէնտէյլի քաղաքապետ Վարդան Կարապետեան, քաղաքապետական Խորհուրդի անդամ Վրէժ Աղաճանեան եւ Փաուլա Տիվան, Լոս Անձելէսի քաղաքական Խորհուրդի անդամ Մոնիկա Ռոտրիկէզի անունով ելոյթ ունեցաւ Քրիսթին Ճէրեանը

կավար Վարդուհի Մինասեան), երգիչներ՝ Վարդան Քայմազեան, Արա Շահպազեան, Անդրանիկ Յակոբեան, Արման Դազարեան եւ Արթիւր Յակոբեան, (Mr. X): Երգահոնահար՝ Աշոտ Սարգիսեան:

Աւարտին ազգային եւ հայրենասիրական երգերով հանդէս եկաւ Առնօ Մկրտիչեան:

Ուշ երեկոյեան ներկաները գբօսայգիէն բաժնուեցան հայրենական գեղեցիկ եւ չիշատակելի օրուան մը լաւագոյն սպաւորութիւններով:

### Հայաստան-Սփիւռք Համաժողովը

Շարունակուած էջ 1-էն

Ան անդրադարձաւ Հայաստանի այժմեան ժողովրդագրական պատկերին եւ արտագաղթի մտահոգիչ երեւոյթին, որոնք հետեւանք են քառորդ դարեայ առարկայական եւ ենթակայական բազմաթիւ գործօններու: «Առաջիկայ բոլոր տարիներու մեր քայլերը պիտի ուղղուին Հայաստանի մէջ բնակչութեան բնական աճը աւելցնելուն»:

«Մենք կը յայտարարենք, որ մեր նպատակն է, որպէսզի Հայաստանը 2040 թուականին ունենայ

«Հայաստանակեդրոն համազգային հայեցողութեամբ կարգի ձեւաւորում» խորագրով քննարկման ընթացքին ելոյթ ունեցաւ ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկեր Համբիկ Սարաֆեան: Ան տեսակէտ յայտնեց, որ իւրաքանչիւր հայ պէտք է ըմբռնէ, որ հայրենիքը պահպանելն ու պաշտպանելը իր պարտականութիւնն է, այնպէս ինչպէս ըմբռնած են շարք մը այլ ժողովուրդներ: Ան զգուշացուց, որ առանց այդպիսի գիտակցութեան հայրենիքը չի կրնար գոյատեւել: Ընկեր Սարաֆեան խօսեցաւ



Ելոյթ կ'ուճեցայ ԸՈԿ. Համբիկ Սարաֆեան

առնուած 4 միլիոն բնակիչ: Ակնյայտ է, որ միայն ծնելիութեան մակարդակը աւելցման, մարդոց կեանքի տեւողութեան երկարացման եւ ժողովրդագրական պատկերը բարելաւող միւս քայլերով մենք այդ նպատակին դժուարութեամբ կը հասնինք՝ թէեւ այդ ուղղութիւններով հաստատակամօրէն առաջ պիտի երթանք: Հետեւաբար նպատակադրումը կ'ենթադրէ գալիք 25 տարիներու ընթացքին դէպի Հայաստան ներգաղթի լուրջ ցուցանիշներու ձեռքբերում»:

Արցախի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեան իր ողջոյնի խօսքին մէջ կարեւոր ու պահանջուած համարեց բարձր մակարդակով կազմակերպուած այս համաժողովը եւ Մայր Հայաստանի, եւ Սփիւռքի, եւ Արցախի համար, ընդգծելով, որ խնդիրները, որոնք ընդգրկուած են համաժողովի օրակարգին մէջ, ունին ռազմավարական նշանակութիւն մեր պետականութեան շարունակական զարգացման հեռանկարներու նախանշման տեսանկիւնէն:

Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս իր ողջոյնի խօսքին մէջ յօյս յայտնեց, որ ներկայ համաժողովը կը դառնայ Հայաստան-Սփիւռք իրապաշտ երկխօսութեան եւ համահայկական խնդիրներու ու մարտահրաւէրներու լուրջ քննարկման եզակի առիթ:

Համաժողովի աշխատանքները շարունակուեցան յատուկ նիւթերու շուրջ քննարկումներով, որոնք կը վերաբերէին, Հայաստանի տնտեսական զարգացման խնդիրներուն, պաշտպանական եւ արտաքին քաղաքականութեան, հայապահպանութեան եւ այլ հարցերուն:

կարգ մը վտանգներու մասին, որոնք կը վտանգեն հայրենիքը: «Անտար բերութիւնը Հայաստանի նկատմամբ, մանաւանդ Սփիւռքի մէջ, դարձած է վտանգաւոր երեւոյթ մը: Նաեւ վտանգաւոր են ան փութութիւնն ու անտեղի ինքնավստահութեան դրսեւորումը», զգուշացուց ընկեր Սարաֆեան եւ նշեց, որ մենք միշտ կը պարծենանք արցախեան յաղթանակով ու կը կարծենք, թէ պիտի յաղթենք ինչ որ ալ ըլլայ պարագան: Անոր համաձայն, Սփիւռքի մէջ պէտք է անընդհատ խօսիլ Հայաստանի անվտանգութեան պահպանումին մասին, որպէսզի հայ երիտասարդը միշտ ապրի Հայաստանի հետ եւ անոր կողքին: «Ազգ-բանակ գաղափարախօսութիւնը կրնայ յաջողի եթէ սկսինք Հայաստանը դարձնել մեր ուշադրութեան կեդրոնը», հաստատեց ընկեր Սարաֆեան: Ան կոչ ուղղեց չլուսահատելու եւ չկարծելու, որ եթէ լաւագոյնին չենք կրնար հասնիլ, ապա ընդհանրապէս յաջողելու յոյս չունինք: «Փոխարէնը, պէտք է սկսինք գործի եւ վստահաբար կը հասնինք նպատակին», ըսաւ ան:

ՄԴՀԿ ատենապետը նաեւ նշեց, որ պատերազմը յաղթելէն աւելի դժուար է խաղաղութեան պայմաններու մէջ մարտունակութիւնը պահել, իսկ եթէ այդ կարեւոր ընել, ապա կրնանք իրագործել Ազգ-բանակի նպատակները:

Համաժողովի ծիրէն ներս տեղի ունեցաւ յատուկ խորհրդակցութիւն Համահայկական Խորհուրդի ստեղծման հարցին շուրջ:

Համաժողովի աւարտին պիտի ներկայացուի եզրափակիչ յայտարարութիւն արդիւնքներու մասին:

2եր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 massis2@earthlink.net



### Հարցազրույց ԱՄՆ-ի Գոնգրեսական Ջեքի Սփիր Կանչելեանի հետ



Միացեալ Նահանգներն ու Հայաստանը բացառիկ բարեկամներ են, բարեկամներ, որոնց անհրաժեշտ է ամրապնդել յարաբերութիւնները, ասում է կոնգրեսական Ջեքի Սփիր Կանչելեանը, ում նախաձեռնութեամբ այս Կիրակի Հայաստան կ'այցելի Միացեալ Նահանգների կոնգրեսականների ներկայացուցչական պատուիրակութիւնը: «Ամերիկայի Ձայն»-ին տուած հարցազրույցում կոնգրեսականը պատմել է առաջիկայ այցի եւ դրա նպատակների մասին:

- Սա երեւի թէ կոնգրեսականների ամենամեծ պատուիրակութեան այցն է անկախ ժողովրդավարական Հայաստան: Մենք ցանկանում ենք Հայաստանում լինել՝ տօնելու ժողովրդավարութեան տարեդարձը: Պատուիրակութիւնը բաղկացած է լինելու ինչպէս դեմոկրատական այդպէս էլ հանրապետական կոնգրեսականներից, այդ թւում կոնգրեսում Հայաստանի բարեկամութեան խմբի միւս համանախագահ, Նիւ Ճրզիցի ընտրուած կոնգրեսական Ֆրանք Փալոնը, Կալիֆորնիայից իմ գործընկեր, ով նոյնպէս հայկական արմատներ ունի՝ կոնգրեսական Աննա Էշուն, Հաուաիից ընտրուած կոնգրեսական Թուրի Գաբարդը, Վիսքոնսինից ընտրուած կոնգրեսական Ջիմ Սենսերբերենը եւ նոյնպէս Գալիֆորնիան ներկայացնող կոնգրեսական Վալադաոն: Այսպիսով, բաւականին լայն ներկայացուցչական կոնգրեսականների խումբ է:

Ինչ վերաբերում է նպատակներին, դրանք բազմաթիւ են: Առաջինը՝ ամրապնդել մեր բարեկամութիւնը, օգնել Հայաստանին ձերբազատուել երկրում մնացած կոռուպցիայի բոլոր դրսեւորումներից, ստեղծել նոր հնարաւորութիւններ Հայաստանին օգնութիւն տրամադրելու համար՝

ուղղուած ժողովրդավարութեան զարգացմանը, եւ նաեւ տօնելու երկրում ժողովրդավարութեան տարածումը եւ վերջին ընտրութիւնները: Մենք պատրաստուած ենք ծանօթանալ Հայ ժողովրդի բոլոր ձեռքբերումներին:

Ճիշտն ասած, մեր օրակարգն այնքան խիտ է, նոյնիսկ չեմ պատկերացնում, ինչպէս ենք այդ ամենը հասցնելու, բայց մենք անշուշտ ծանօթանալու ենք Հայաստանում զարգացող բազմաթիւ նոր նախաձեռնութիւնների, յատկապէս՝ տեխնոլոգիական ոլորտում, ծանօթանալու ենք տեխնոլոգիաների ոլորտում աշխատող երիտասարդների հետ, ուսումնասիրելու ենք կանանց առողջութեան բարելավման ծրագրերը, հանդիպումներ ենք ունենալու համալսարաններում: Անշուշտ, քննարկելու ենք նաեւ աշխարհաքաղաքական եւ տնտեսական հարցեր: Երկակի հարկման խնդիրն օրինակ լուրջ խոչընդոտ է հենց ամերիկացիների համար, ովքեր ցանկանում են Հայաստանում ձեռնարկատիրութեամբ զբաղվել:

- Ինչո՞ւ Հայաստանը, կա՞ն արդեօք գործնական կամ զգացական պատճառներ:

- Մեզանից հայկական արմատներ ունեցողների համար անշուշտ շատ կարեւոր է հայրենիք այցելել, ծանօթանալ պատմական հայրենիքի հետ, զգալ, շօշափել այն, ճաշակել հայկական ուտեստները Հայաստանում: Շնորհակալ ենք նաեւ Հայաստանի նախագահին մեզ ճաշի հրաւիրելու համար: Այսպիսով, մենք կը հաստատենք այդ զգացական կապը: Համոզուած եմ, մեր ծնողները հպարտ կը լինեն, տեսնելով, որ մենք Հայաստան ենք այցելել:

Քաղաքական տեսանկիւնից,

Շար.ը էջ 7

### «Խաղաղութեան Ուղիներ. Կրօններն ու Մշակույթները Երկխօսութեան Մէջ» Միջազգային Համաժողով Գերմանիոյ Մէջ



10-12 Սեպտեմբերին, Գերմանիոյ Միւնխեն քաղաքներուն մէջ տեղի ունեցաւ «Խաղաղութեան ուղիներ. Կրօններն ու մշակույթները երկխօսութեան մէջ» միջազգային համաժողովը, կազմակերպուած Սանտ Էճիտիո միջազգային խաղաղարար կազմակերպութեան կողմէ:

Համաժողովին մասնակցած էին տարբեր կրօններու եւ միջազգային կազմակերպութիւններու հարիւրաւոր ներկայացուցիչներ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրապոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ համաժողովին իր մասնակցութիւնը բերաւ Բրիտանիոյ եւ Իրլանտայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովակիմ եպիսկոպոս Մանուկեան:

Համաժողովի հանդիսաւոր բացման արարողութեան ընթացքին Միւնխենի եպիսկոպոս Գերաշնորհ Ֆելիքս Կեննի եւ Միւնխենի քաղաքապետ Մարքուս Լեւէի ողջունի խօսքերէն ետք ընթացուած է Կաթողիկէ Եկեղեցւոյ Քահանայապետ Նորին Սրբութիւն Ֆրանսիսկոս Պապի ուղերձը, ապա խօսքը տրուած է հիմնական բանախօսներուն՝ Սանտ Էճիտիոյ հիմնադիր Անտրէա Ռիքարտին, Գերմանիոյ վարչապետ Անկելա Մեր-

քէլին, Նիճերիոյ Հանրապետութեան նախագահ Մահամատու Խուֆուին, Եւրոպական Խորհրդարանի նախագահ Անթոնիօ Թալանիին եւ Ալ Ազհարի (Եգիպտոս) գերագոյն իմամ Ահմատ Մուհամատ Ալ Թայպին:

Համաժողովի առաջին օրը բանախօսութիւններով հանդէս եկած են Գոլոմպիոյ համալսարանի Երկրաբանական հիմնարկի տնօրէն դոկտ. Ճեֆրի Սաչս՝ ԱՄՆ-էն, Սանտ Էճիտիո համայնքի անդամ Ալպա Ռուիս տէ Անտրէա՝ Սպանիայէն, Անտիօքի եւ Համայն Արեւելքի Յոյն Ուղղափառ Պատրիարք Յովհաննէս Ժ., Ֆրանկֆորտի ռապպի Աչիլայի Աբէլ եւ Ռիւշօ Քոսէի Քաի Պոլտտիզմի նախագահ Քոշօ Նիւանօ՝ Ճափոնէն:

Համաժողովի երկրորդ օրը «Քրիստոնէական նահատակութիւն. անցեալը եւ ներկան» թեմային շուրջ բանախօսութեամբ հանդէս եկած է Յովակիմ եպիսկոպոս: Տեղի ունեցած են նաեւ շարք մը քննարկումներ, որոնց իրենց մասնակցութիւնը բերած են տարբեր կրօններու եւ կրօնական համայնքներու ներկայացուցիչներ:

Համաժողովն աւարտած է 12 Սեպտեմբերին, խաղաղութեան թափորով եւ խաղաղութեան հաստատման կոչով:

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Ave Pasadena, CA 91104

**Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝ (626) 398-0506**

LIFE INSURANCE    INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE    LONG TERM CARE    MEDICARE    DENTAL & VISION    DISABILITY

**MARONIAN INSURANCE SERVICES**

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

**Call us today!**

**(818) 500 9585**  
**(818) 269 0909**

**Bedros & Siamanto**  
 805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815  
 MARONIANINSURANCE.COM



### Անորոշուծիւն Պոլսոյ Պատրիարքական Ընտրութիւններուն շուրջ. Նահանգապետը Վերապահուցնելու Ունի

Պոլսոյ Հայոց պատրիարքի ընտրութիւններուն շուրջ կրկին անորոշութիւն ստեղծուած է: Յուլիսի սկիզբը պատրիարքական ընտրութիւնները կազմակերպող նահապետական մարմինը Պոլսոյ նահանգապետարանի ուղարկուած դիմումով Ներքին գործոց նախարարութեան ներկայացուցած էր ինչպէս նախաձեռնակ մարմնի կազմը, այնպէս ալ ընտրութիւններու իրականացման օրը: Ընտրական գործընթացի յառաջխաղացման համար անհրաժեշտ է, որ Ներքին գործոց նախարարութիւնը պատասխանէ պատրիարքութեան նամակին եւ յանձնարարութիւն տայ ընտրութեան իրականացման համար:

Սակայն, ինչպէս կը տեղեկացնէ «Ակօս» շաբաթաթերթը, պնդումներ կը շրջանառուին, որ Պոլսոյ նահանգապետ Վասիփ Շահին Նախաձեռնող մարմնի որոշանումներու վերաբերեալ վերապահումներ ունի: Ըստ «Ակօս»ի տեղեկութիւններուն, նահանգապետը յայտնած է, թէ ձեւաւորուած մարմնի կազմէն գոհ չէ, եւ այդ կազմով հնարաւոր չէ ընտրութիւն իրականացնել:

Նշուած է, որ 12 Սեպտեմբերին պատրիարքարանին մէջ տեղապահ Գարեգին արքեպիսկոպոս Պէքճեանի նախագահութեամբ ժողով գումարուած է, որուն նպատակն, ըստ «Ակօս»ի, նահանգապետի առարկութիւնները քննելն էր:

Ժողովը որոշած է, որ հարկաւոր է սպասել պետութեան պաշտօնական պատասխանին, որ պէտք է Հոկտեմբերի սկիզբը հասնի: Պատասխանի չստանալու կամ բացասական որոշման պարագային պիտի դիմեն Նահանգապետին հանդիպում կազմակերպելու համար:

Ժողովէն ետք որոշ տեղեկութիւններ փոխանցած է Նախաձեռնող մարմնի անդամ, իրաւաբան Սեպու Ասլանկիլի: Ան նշած է, որ Նախաձեռնող մարմինը իրաւական

կարգավիճակ ունի, եւ այս առումով որեւէ առարկութիւն պէտք չէ ըլլայ:

«Նախաձեռնող մարմինը նահանգապետարանին դիմում ներկայացուցած է, այդ դիմումին պատասխանելու համար ժամկետներ կան: Ժողովի ժամանակ այդ ժամկետներուն մէջ որոշման սպասելու դիրքորոշումը յաղթեց»:

Իսկ նահանգապետի վերապահումներուն մասին շրջանառուող պնդումներուն վերաբերեալ Ասլանկիլի նշած է, որ եթէ պետութեան կողմէ նման վերապահումներ կան, ուրեմն անոնք պէտք է ներկայացնէ պաշտօնական գրութեամբ:

«Մենք պաշտօնապէս որեւէ գրութիւն չենք ստացած: Դիմումը ներկայացուցած ենք, կը սպասենք: Քանի որ ընտրական շրջանի մէջ ենք, անընդհատ նման պնդումներ առաջ կը քաշուին»:

Ըստ Ասլանկիլի, եթէ ներկայացուցած դիմումին պետութեան կողմէ պատասխան չտրուի, կը նշանակէ որ դիմումը մերժուած է: Այս պարագային Նախաձեռնող մարմինը քանի մը ընտրութիւն ունի, որոնցմէ մէկն ալ դատական հայց ներկայացնելն է:

Կայացած ժողովին մասին տեղեկութիւններ հաղորդած է նաեւ ժողովի մասնակից հայկական Ս. Փրկիչ հիւանդանոցի հիմնադրամի նախագահ Պետրոս Շիրինօղլու, նշելով, որ հանդիպումը ընթացած է լարուած մթնոլորտի մէջ, իսկ մասնակիցներու դիրքորոշումը տիրեցուցած է զինք:

Ըստ Շիրինօղլուի, ան տեղապահին յայտնած է, որ Նախաձեռնող մարմնի կազմը կ'անհանգստացնէ պետութիւնը, եւ այն անհրաժեշտ է լուծարել: Ի պատասխան տեղապահ Պէքճեան նշած է, որ ինք գոհ է ընտրութիւնը կազմակերպող մարմնի աշխատանքներէն եւ այն պիտի չլուծարուի: Շիրինօղլու կը կարծէ, որ պէտք չէ նման կերպով մարտահրաւէր նետել պետութեան:

### Գոլոմպիոյ Մէջ Ռուսիոյ Դեսպանութիւնը Հաստատած է Արսէն Ոսկանեանի Մահուան Լուրը

Գոլոմպիոյ մէջ Ռուսիոյ դեսպանութիւնը հաստատած է 2016 թուականի Նոյեմբերին գերի ինկած Ռուսիոյ եւ Հայաստանի քաղաքացի Արսէն Ոսկանեանի մահուան մասին տեղեկութիւնը: Այս մասին, ինչպէս կը հաղորդէ «ԹԱՍՍ» լրատուական գործակալութիւնը, դիւանագիտական ներկայացուցչութիւնը գրառում կատարած է Ֆէյսպուքեան իր էջին:

«Այն մասին, թէ ինչ տեղի ունեցած է այդ ողբերգական օրը (2017 թուականի Ապրիլին), կան զանազան տարբերակներ: Մէկ բան յստակ է, որ պարոն Արսէն Ոսկանեան մահացած է: Ենթադրաբար, գերութենէ փախչելու ժամանակ», - կ'ըսուի դեսպանատան յայտարարութեան մէջ:

Դիւանագիտական ներկայացուցչութենէն յայտնած են, որ օգտագործած են պաշտօնական եւ ոչ պաշտօնական բոլոր օղակները սպանութեան տեղեկութիւնը ճշդելու համար: Այդուհանդերձ, մահուան յստակ պատճառը պարզել հնարաւոր չէ եղած:

«Ներկայիս մենք Գոլոմպիոյ իրաւասու գերատեսչութիւններուն, միջազգային կառույցներուն, ինչպէս նաեւ մահացածի բարեկամներուն հետ սերտ կապի մէջ ենք, կազմակերպելու համար ապստամբներու կողմէ թաղուած դիակի տեղափոխումը», - նշած են Գոլոմպիոյ մէջ Ռուսիոյ դեսպանութենէն:

42-ամեայ Ոսկանեան Գոլոմպիոյ «Ազգային ազատագրման բանակ» ապստամբ խմբաւորման կողմէ գերեզմարուած էր 2016 թուականի Նոյեմբերին, հիւսիսարեւմտեան Չոքօ շրջանին մէջ: Խմբաւորումը վստահեցուցած էր, թէ ան հաւաքած է թունաւոր գորտեր, նպատակ ունենալով զանոնք դուրս բերել Գոլոմպիոյ տարածքէն:



Ոսկանեան վեց ամիս առաջ՝ 2017 թուականի Ապրիլին սպանուած է: Խմբաւորման առաջնորդը յայտնած էր, որ Ոսկանեան սպանուած է փախուստի փորձ ձեռնարկելու ժամանակ: ՀՀ քաղաքացին այդ ժամանակ վերցուցած է նուակը եւ պայթեցուցած, վիրաւորելով խմբաւորման հինգ անդամ: Այդ ժամանակ «Ազգային ազատագրման բանակ»ի անդամները կրակած են անոր ուղղութեամբ ու սպանած զինք:

«Ազգային ազատագրման բանակ»ը ներկայիս խաղաղութեան հաստատման նպատակով բանակցութիւններ կը վարէ երկրի կառավարութեան հետ, նպատակ ունենալով դադարեցնել աւելի քան 53 տարի շարունակուող պատերազմը: Էքսուստորի մէջ հանդիպում ունեցած երկու կողմերը 4 Սեպտեմբերին յայտնած են, որ համաձայնութեան եկած են Հոկտեմբեր ամիսէն սկսեալ երկկողմ կրակի դադարեցման հարցին շուրջ: Հրադադարը պիտի շարունակուի մինչեւ յաջորդ տարի, այն կը բացառէ նաեւ առեւտրային իրականացումը:

Գոլոմպիոյ մէջ շարունակուող հակամարտութիւնն այս տարիներու ընթացքին խլած է 220 հազար անձի կեանք, միլիոնաւոր մարդիկ տեղահանուած են:

### Հարցազրոյց Ձեփ Սփիր Կանչելեանի հետ

Շարունակուած էջ 6-էն

մեզ անհրաժեշտ է Հայաստանի հետ յարաբերութիւններ կառուցել: Ես կը ցանկանայի, որ Հայաստանն աւելի մեծ թուով օգնութիւն ստանար, որովհետեւ ես դիտարկում եմ Հայաստանը որպէս մեր գործընկերը մի տարածաշրջանում, որը գտնուում է Ռուսաստանի ազդեցիկ գործողութիւնների ազդեցութեան տակ: Ռուսաստանն իր կողմից փորձում է ընդլայնել ազդեցութեան իր օղակը, փորձում է վերահսկողութիւն հաստատել, վերականգնել Խորհրդային Միութիւնը: Համոզուած եմ, որ Հայաստանը չի ցանկանում կրկին դառնալ Խորհրդային Հայաստան:

Այսպիսով, մենք ցանկանում ենք ամրապնդել Հայաստանի հետ յարաբերութիւնները, որպէսզի Հայաստանն այլեւս երբեք ստիպուած չլինի անհանգստանալ իր ինքնիշխանութեան վտանգի մասին:

Մենք նաեւ ցանկանում ենք քննարկել Ռուսաստանի էներգակիրներից Հայաստանի կախուածութեան հարցը, ինչպէս նաեւ հնացած ատոմակայանի հարցը: Մենք ցանկանում ենք համագործակցութեան նոր ուղիներ գտնել եւ ժողովրդավարութիւն կառուցել, ինչպէս նաեւ՝ կառուցել մեր

յարաբերութիւնները:

-Որո՞նք են հայ-ամերիկեան յարաբերութիւնների օրակարգի հիմնախնդիրները:

- ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանը Հայաստանի հիմնական առաւելութիւնն է: Անցած ժամանակահատուածում դեսպանը քրտնաջան աշխատանք է կատարել: Նա անչափ հմայիչ է եւ մեզ հետ միասին յարաբերութիւնների ամրապնդման ուղիներ է հայթայթում: Դա ձեռնարկ է Հայաստանին՝ օգնութեան ստացման տեսակէտից, Հազարամեակի մարտահրաւէրներ կողուպորացիայի դրամաշնորհների ստացման հեռանկարի տեսանկիւնից: Բազմաթիւ հնարաւորութիւններ կան նաեւ տեխնոլոգիական ոլորտում, որոնք մենք կը ցանկանայինք զարգացնել: Բազմաթիւ միջոցներ կան օգնելու Սփիրուքի հայերին Հայաստան այցելելու եւ ձեռնարկատիրութեամբ զբաղուելու համար: Մէկ օր չի անցնում առանց նրա, որ չհանդիպեմ հայի, ով հսկայական ջանքերով ինքնիշխան է հասել Միացեալ Նահանգներում եւ ով ցանկանում է միջոց գտնել հայրենի Հայաստանի հետ կապը վերահաստատելու համար, այնպէս որ մենք նաեւ այդ ուղղութեամբ ենք ցանկանում քայլեր կատարել:

OIA & HAMAZKAYIN PRESENT

# Sibil In LA

A Red Carpet-Black Tie Optional Event

Renowned Armenian Singer from Istanbul **Sibil**

Guest Singer from Armenia **Andre**

Hamazkayin & Lilia Markarian Dance Group

Alex Pilibos School Choir

October 22, 2017 Sunday 5:30pm @ Wilshire Ebell Theatre 4401 W 8th St. Los Angeles, CA 90005

Ticket Prices: \$40 - \$100

Tickets available at: [www.itsMySeat.com](http://www.itsMySeat.com) or text: Nurhan: (818) 486-6676 \* Talin: (213) 379-6317 Vania: (818) 216-9935 \* Lucy: (818) 585-3207



### ՔԵԱՄԱՐԱ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



Լոս Անջելեսի Քեամարա Հայրենակցական Յանձնախումբը՝ Նստած շարքը ձախից-աջ՝ Ռուբեն Կորիս (գրքի խմբագիր), Նորայր Միրզախանեան, Սեմիկ Շահվերդեան (փոխ նախագահ), Սայեսդ Մանուկեան (նախագահ), Վահան Ղարիբեան (քարտուղար, գանձապահ եւ հաշվապահ), Մինաս Շամիրեան, Աբրահամ Ղադիմեան: Կանգնած շարքը ձախից-աջ՝ Գեղամ Շահբազեան, Հայկ Բարխուրդարեան, Ջիրբայել Ղազարեան, Համո Սաֆարեան, Խաչիկ Շամիրեան, Արամ Շամիրեան, Գուրգեն Նազարեան: Բացակայ անդամներ՝ Շաւարշ Ղազարեան, Շահէն Հախվերդեան եւ Սերոժ Շահվերդեան:

#### Ռ. ԿՈՐԻՍ

Իրանահայութեան պատմութիւնը շատ հին վաղեմի անցեալ ունի: Հայերի գանգուածային բնակութիւնը Իրանի հարաւային կողմում սկսում է Շահ Աբասի բռնագաղթից տասնեօթ դարի սկզբում:

1912-ին խորհրդարանական ընտրութիւնները կը յատկանշուին անով որ, ընտրական ասպարէզ կ'իջնէ Իթիբալիստին ընդդիմադիր, անոր մրցակից Իթիբալիստի վէ Հուրիյէթ կուսակցութիւնը: ՄԴՀԿ-ը ընտրական դաշինքի մէջ կը մտնէ Իթիբալիստի հետ: Պատճառը պարզ էր. Իթիբալիստ իր նախընտրական ծրագիրով բաղկացուցիչ ազգութիւններուն հանդէպ շատ աւելի լայնախոհ էր քան Իթիբալիստը[8]: Բայց հարցին չեղեցող մասը այլ էր. Սապահ-Գիւլեանի խօսքերով՝ «չիւղն անգամ մեզ համար ուժ էր, երբ նա Իթիբալիստի դէմ ցցուէր»: Հայ քաղաքական միտքը կազմող բոլոր հոսանքները՝ պատրիարքարան, համայնքներ, ազգային ժողովի խմբակցութիւններ, կուսակցութիւններ, անհատ թեկնածուներ, եւ այլն իրար հետ պայքարի կը մտնեն Իթիբալիստին՝ «պետական կուսակցութեան» ընտրացանկին մէջ տեղաւորուելու համար[9]: Այդ պահուն է որ կը հնչէ Սապահ-Գիւլեանի կծու քննադատութիւններէն մէկը. «Հայաստանի վիճակը սրտին ունեցողը Իթիբալիստին պախարակած քուէ միայն կարող է տալ եւ ոչ թէ գործակցութեան յօժարութիւն: -Հայ ազգի իսկական շահերը կը թելադրեն Իթիբալիստի դէմ ըլլալ: Մեր պարտականութիւնը այդպէս հասկցանք եւ դիրք բռնեցինք: Թէ որքան հեռու եղանք եւ իրաւունք ունեցանք այդ դիրքը բռնելու, դա մօտիկ ապագան ցոյց կու տայ, եթէ ներկան արդէն ցոյց չի տուել»[10]:

Քանի մը ամիս անց, Ս. Սապահ-Գիւլեան արդէն կը խօսի «զանգուռածային ջարդերով» հայ ժողովուրդի բնաջնջման մասին. «Մարդ արտաքոյ կարգի ուղեղ պիտի ունենայ, մինչեւ ցարդ դրականապէս համոզուած չլինելու համար՝ որ Իթիբալիստը, - պարզ, մեկին, որոշ ձգտում, պատմական տխուր միտք ունի. այս երկրի բաղկացուցիչ բոլոր ազգութիւնները ջնջել՝ ուժի վրայ հենած պետական մեքենայի եւ թրքական քաղաքակրթական միջոցներով, - այսինքն մասնակի եւ զանգուածային ջարդերով (sic) եւ այլ պատմական հարիմացութիւններով: - Հայ ազգի գոյութիւնը նա վտանգ է համարել օսմանեան պետութեան մնացուն շահերին եւ նա այդ վտանգը հեռացնելու պատմական պարտականութիւնը վրան է առել»[11]:

Յաջորդ տարին շրջադարձային կ'ըլլայ Իթիբալիստին համար: Պալքանեան պատերազմին հետեւանքով եւրոպական նահանգներուն կորուստը եւ ոչ-թուրք իսլամ ժողովուրդներուն (արաբներ, ալպանացիներ) անջատողական ձգտումները, անոր վերնախաւին մօտ վերջնական համոզում կը գոյացնեն, որ Օսմ. Կայսրութեան ամբողջականութեան պահպանման դիտանկիւնէն կարելի է վստահիլ միայն թուրք տարրին վրայ: Ներքին ճակատի վրայ գերմանամետ Իթիբալիստին եւ անգլիամետ Իթիբալիստի միջեւ եղած արիւնալի փոխադարձ պետական հարուածներուն հետեւանքով, իշխանութեան վրայ կ'ամրապնդուի Իթիբալիստի եւ ապետութիւնը՝ ինվեր, ձեմալ, թալապը. «Կարմիր եւ ապետութիւնը կը սկսի երկիրը ղեկավարել կարմիր սուլթանի համարին նման»[12]:

1913-ը ճակատագրական կ'ըլլայ նաեւ Հնչակեան կուսակցութեան համար: Սեպտեմբերին, Ռուս-մանիոյ Կոստանցա քաղաքին մէջ կը գումարուի ՄԴՀԿ 7-րդ Համագումարը: Փաստերը ցոյց կու տան, որ համագումարի կայացման մէջ եղած է շտապողականութիւն, որուն համար կը մեղադրուի Ս. Սապահ-Գիւլեան[13]: Ժամանակը կը հալածէր: Մեծ պատերազմի մը թմբուկին ձայները կը լսուէին, որուն Օսմ. Կայսրութիւնը կը պատրաստուէր մասնակցելու Գերմանիոյ կողքին, ազգայնամոլ եւ ռազմապաշտ Իթիբալիստական եւ ապետութեան բռնատիրութեան տակ, որուն դէմ պայքարելու համար ոչ ժողովրդավարական միջոցներ գոյութիւն ունէին, ոչ ալ համաթրքական առումով միագանգուած ընդդիմադիր ուժեր մնացած էին:

Այս պայմաններուն տակ գումարուած ՄԴՀԿ 7-րդ Համագումարը կ'որոշէ. «Նկատելով որ Տաճկաստանի մէջ տիրապետում է մի ՕԼԻԿԱՐԽԻԱ, որի ղեկավարիչ ոյժն է Իթիբալիստ վէ Թերաքը կուսակցութիւնը: Որոշ լինելով որ այդ կուսակցութեան հիմնական սկզբունքներն են պահել թրքական բիւրօկրատիան, թոյլ չտալ որ նորագոյն Պետութիւն յառաջանայ ու նրա դիտաւորութիւնն է բաղկացուցիչ ազգութիւնները ձուլել (sic), ոչնչացնել (sic)՝ ի հարկին եւ կոտորել (sic): Անվիճելի համարելով, որ իշխանութիւնը իր ձեռքում ունեցող Տիրող Դասակարգը իր հայկործան քաղաքականութիւնը սխտեմադրիկ եւ անողոք կերպով յառաջ է տանում □», կ'որոշէ վերադառնալ գործունէութեան յեղափոխական ձեւերուն եւ «պաշտպանել ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ՝ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿՕՆՏՐՈԼՈՎ»[14]:

Համագումարի որոշումներուն եւ եզրափակիչ հաղորդագրութեան մէջ յստակօրէն կ'երեւի Սապահ-Գիւլեանի ոճական դրոշմը: Ստոր դաւաճանութիւն մը սակայն ի դերեւ կը հանէ Հնչակեան ծրագիրը: 1914 Յունիս 17-ին, այսինքն 1915 Ապրիլ 24-էն շուրջ 10 ամիս առաջ, տեղի կ'ունենան հնչակեաններու զանգուածային ձերբակալութիւնները, շուրջ 120 հոգի, որոնցմէ 20 հոգին պատերազմ

մական դատարանին կողմէ մահուան կը դատապարտուի եւ 1915 Յունիս 15-ին կախաղան կը հանուի Կ.Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ: Սապահ-Գիւլեան եւս, ի բացակայութեան մահուան կը դատապարտուի: Ան կ'ամբաստանուի որպէս Անկախ Հայաստան ստեղծելու անջատողական ծրագիրին գլխաւոր հեղինակը. (հարցաքննութիւններուն ժամանակ ձերբակալուածներուն ամենէն շատ ուղղուած հարցումը կ'ըլլայ թէ, ան ի՞նչ կապ ունի Սապահ-Գիւլեանի հետ)[15]: Հնչակեան շուրջ 35 այլ գործիչներ վանի, Կեսարիոյ, Ատապազարի, Հաճընի, Պէյրուսի, Դամասկոսի մէջ եւ այլուր, դատական որոշումով կամ մինչեւ դատարան հասնին մահուամբ կը պատժուին:

Տեղի կ'ունենայ այն մեծ ոճիրը, որ կը կոչուի Հայկական Յեղասպանութիւն: Կը կատարուի այն ինչ Սապահ-Գիւլեան նախատեսած էր վաղուց: Ու այդ կը կատարուի ի գին իր գինակից եւ համախոհ ընկերներուն նահատակութեան, որոնք վերջին պահուն, վերջին գերագոյն ճիգով մը պիտի փորձէին կանխել Մեծ Ոճիրը:

Սապահ-Գիւլեան Եգիպտոսի եւ ԱՄՆ-ի մէջ կը շարունակէ իր քաղաքական գործունէութիւնը: Համաշխարհային Պատերազմը դեռ նոր սկսած էր. ան խորապէս կը հաւատար որ Օսմ. Կայսրութիւնը պիտի փլուզուի. պէտք էր պատրաստ ըլլալ այդ օրուան:

Իր խճողուած առօրեային մէջ, երբ բառացիօրէն գրիչը վար չէր ինչպիսի անոր ձեռքէն, Քսաններու կախաղանումէն անմիջապէս յետոյ, Սապահ-Գիւլեան ժամանակը հասած կը գտնէ արտայայտելու ներադին կրծող մեծ ցաւը: Այդ կ'ըլլայ պոռթկուածային, չծրագրուած, հապճեպ:

Կը ծնի «Պատասխանատուները»:

Սապահ-Գիւլեանի ցաւը վստահեմ շատերու կը կրծէ եւ պիտի կրծէ: Անորմէ խուսափում չկայ: Այդ մասին պէտք է արտայայտուել ռուսարկայական ձեռով քննարկել այդ՝ որպէս հայ քաղաքական միտքի պատրաստման կարեւոր դարձումներէն մէկը:

Հոս եւս պէտք է Սապահ-Գիւլեանի համարձակութիւնը:

\*\*\*\*\*

- [1] «Հնչակ», 1Մայիս 1902. Ս. Գիւլեան, «Երիտասարդ թուրքիա եւ Երիտասարդ Հայաստան»:
- [2] Ս. Գիւլեան, «Երիտասարդ թուրքիա», Փարիզ, 1908, էջ 76:
- [3] «Հնչակ», Յունիս-Յունիս 1908. Ս. Գիւլեան, «Սահմանադրական թուրքիա եւ Հայկական Խնդիր»:
- [4] «Մշակ», 24 Օգոստոս 1908. Հ. Առաքելեան, «Զգուշացէք Չափազանցութիւններէց»:
- [5] Նոյն:
- [6] «Սուրհանդակ», 2 Սեպտեմբեր 1908. «Օսմանեան Միութիւն եւ Յառաջդիմութիւն կոմիտէն եւ Հնչակեան կուս.»:
- [7] Հնչ. արխիւ, Պէյրուսի, «ՄԴ Հնչակեան կուսակցութեան Զ. Ընդհանուր Պատգամաւորական ժողովի Գլխաւոր Որոշումները»:
- [8] «Նոր Աշխարհ», 20 Մարտ 1912. Արսէն Կիտուր, «Իթիբալիստ եւ Իթիբալիստ»:
- [9] Եղիկ ձէրէճեան, «1912-ի Օսմանեան Երեսփոխանական Ընտրութիւնները եւ Արեւմտահայութիւնը», Պէյրուսի, 2007:
- [10] «Նոր Աշխարհ», 6-7 Ապրիլ 1912. Ս. Գիւլեան, «Փարլամենտական Ընտրութիւնների Առիթով»:
- [11] «Նոր Աշխարհ», 19 Սեպտեմբեր 1912. Ս. Գիւլեան, «Պատրիարքարանի Հրահանգների Առթիւ»:
- [12] Անտրէ Մանտէլշտեյն, «Երիտասարդ թուրքերը Պատերազմէն Առաջ», Կ.Պոլսոյ, 1919, էջ 93-94:
- [13] «Նչակ», Մայիս 1914. «Ս. Գ. Հնչակեան Է. Ընդհանուր Պատգամաւորական ժողովի Կարեւոր Որոշումներէն»:
- [14] "Armenian Activities in the Archive Documents 1914-1918", v. 4, T.C. Genelkurmay Başkanlığı, Ankara, 2006:



# «Voices In Silence/Ձայներ Լռութեան Մէջ» Յեղինակ՝ ԴՈԿՏ. ԿԱՐՊԻՍ ՏԵՐ ԵՂԻԱՅԵԱՆ

## Գրախօսեց՝ ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ

Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի՝ «Voices In Silence/Ձայներ Լռութեան մէջ» անգլերէն լեզուով գրուած գիրքը կը բաղկանայ 352 էջերէ: Այդ էջերը ընթերցողին կու տան 1987-էն ի վեր իր կողմէ կազմակերպուած ուխտագնացութիւններու մասին տեղեկութիւններ և բացատրութիւններ: Իսկ հատորի 285 էջերը մեծ ու փոքր գունաւոր, գեղատեսիլ նկարներու համադրութիւն մը կը կազմեն:

Յարգելի դոկտորին այս 15-րդ հատորը, ցարդ իր հրատարակած 14 երկերուն թագն ու պսակը կազմելու բոլոր արժանիքները ունի: Հատոր մը, որու իրագործումի հենքին անայլաչլ կերպով զգալի է գրողին՝ հայ ժողովուրդի անժամանցելի, արդար իրաւունքներու պաշտպանութեան նուիրուած անսասան հաւատքը, նուիրումի եւ ծառայութեան անտեղիտալի ոգին: Հատոր մը, որ իր աւելի քան 800 բազմերանգ, մէկը միւսէն գեղեցիկ, ճաշակաւոր, արուեստագէտ նկարիչ՝ Մայք Յակոբեանի կրաֆիկական հոյակապ յղացքներով ձեւաւորուած նկարներով, իսկ Սարգիս Թօփալեանի «Երեւան» տպարանին մէջ տպագրուած բծախնդիր աշխատանքով, ամէնէն խստապահանջ ճաշակ ունեցողներուն անգամ գոհացում կը պատճառէ: Իսկ 60 էջերու մէջ խտացած անգլերէն բացատրութիւնները, նկարագրութիւնները, պատմական տեղեկանքները յաւելեալ արժէք մը կ'ապահովեն հատորին:

Արդարեւ, «Voices In Silence/Ձայներ Լռութեան մէջ» հատորը, իր խորքով, բովանդակութեամբ թէ՛ ձեւով, մէկ կողմէ ընթերցողին մօտ եզակիօրէն գրաւիչ այլ յուզական, գուարթ այլ խթանող տրամադրութիւններ, ապրումներ կը ստեղծէ, իսկ միւս կողմէ Սփիւռքի թէ՛ Հայրենիքի ժողովուրդին, մանաւանդ հայ նոր սերունդներուն ուղղուած կոչի մը, պայքարի մը պատգամը կը բերէ՝ մեր արդար իրաւունքներու պաշտպանութիւնը, մեր պահանջատիրական պայքարը աննահանջօրէն, անտեղիտալիօրէն շարունակելու ուղղութեամբ:

Եւ ոչ միայն այդ: «Voices In Silence/Ձայներ Լռութեան մէջ» հատորը, իր աչք և սիրտ գրաւող պատկերագրող էջերէն եկող պերճախօս, բազմանշանակ լռութեամբ, աշխարհի ճակատագիրը վարելու յաւակնութիւնը անուցանող մեծ ու պզտիկ երկիրներու մեծ ու պզտիկ դեկավարներուն կը լիչեցնէ՝ բառերով չխաղալու, սեւին՝ սեւ ըսելու պարկեշտութիւնն ու քաջութիւնը: Ժշմարիտը, իրաւը, արդարը պաշտպանելու հրամայականը: Ուրացողներուն, գաւթումը, յափշտակումը, ոճիրը իրենց շրջուած ուղեղով արդարացնողներուն դիմակները վար առնելով, գանոնք անարգանքի սիւնին գամելը: Մեր ժամանակներու համաշխարհային թոհոբոհի մէջ, թափանցիկ ճարպիկութեամբ, սինիթօրէն ճշմարտութեան հետ ճիրիտ խաղացող, օսմանեան իրենց օրը ապրած ցեղասպան սուլթաններու, Թալէաթներու ցեղասպանական արարքները արգարացնել ջանացող էրտո-

ղաններուն, Չառուշողուններուն սին յաւակնութիւններուն դէմ բռունցք դառնալու հրամայականը:

Այո՛, յարգելի ընթերցող, «Voices In Silence/Ձայներ Լռութեան մէջ»ը, իմ կարծիքով, մեր պատմական հայրենիքի աշխարհիկ թէ՛ հոգեւոր կառույցները՝ ամրոցները, տաճարները, եկեղեցիները, կոթողներն ու խաչքարերը, մեր հայրենի դրախտանման բնութեան սէզ, ձիւնապատ լեռները, լայնանիստ կանաչ անտառները, դաշտերը, լիճերը, գետերը, իրենց հարազատ գաւակներէն պարպուած քաղաքներն ու գիւղերը ներկայացնելու, մեր անչափելի կորուստին անհաւորութիւնը արտայայտելու միտող հատոր մը չէ լոկ: Այլ «Ձայներ Լռութեան մէջ» հատորը նաեւ մեզ միասնականութեան հրաւիրող կոչ մըն է, հաւատք, յոյս, կամք չեփորող պատգամ է: Նորախորհուրդ, բազմիմաստ ու բազմաբովանդակ պատկերագրող պատգամ մը, Պարոյր Սեւակի «Անլուելի Չանգակատան» պէս յաւերժախօս պատգամ մը:

\* \* \*

Քանի մը խօսք «Voices In Silence»ի հիմնական նիւթերուն մասին:

Առաջին մասը կը բացուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի անգլերէնով գրուած օրհնութեան նամակով, որուն մէջ Վեհափառ Հայրապետը իր ուրախութիւնն ու շնորհաւորութիւնները կը յայտնէ Մարտոյ Գոլէճին 25 և դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի Միացեալ Նահանգներու մէջ ծառայութեանց 40-ամեակին առիթներով, բարձրօրէն գնահատելով երկուքին ալ առաքելութիւնը՝ կրթութեան, հայկական ժառանգութեանց և ինքնութեան պահպանման ոլորտներուն մէջ: Վեհափառը նաեւ առանձնապէս կը գնահատէ Արեւմտեան Հայաստան և Կիլիկիա կատարուած ուխտագնացութիւններով Դոկտորին Հայ Դատին սատարելը: Վեհափառի գնահատականին կը յաջորդէ հեղինակին սա սրտաբուխ Ձօնը.

«Այս հրատարակութիւնը նուիրուած է մեր թանկագին գաւակներուն եւ սիրասուն թոհոբոհներուն -հպարտ և երախտագէտ ջանակիրները մեր թանկարժէք անանդութեանց և սրբազան արժէքներուն- եւ ի յիշատակ մեր աննման ծնողներուն, մեծ հայրերուն եւ մեծ-մեծ հայրերուն»:

Ապա կու գան երկու նախաբաններ, մէկը Պէյրութի Հայկազեան Համալսարանի նախագահ, Վեր. դոկտ. Փօլ Հայտոսթեանի, իսկ միւսը հեղինակին՝ դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի կողմէ գրուած: Մէջբերեմ, ընտիր անգլերէնով ու մտքերով և այլաբանական ոճով գրուած մի քանի նախադասութիւններ Վեր. Հայտոսթեանի նախաբանէն.

«Այն բոլոր գրույցներէն, որ կ'ըլլան մեր երկուքին միջեւ, լռութեան մէջ տեղի ունեցողները կը պատկանին խորութեանը սրտին:

«Այն բոլոր իմաստներէն, որ մէկը կրնայ ընել կեանքի մէջ, անոնք որ կրնան անդրանցնել ժամանակն ու միջոցը, անոնք որ կ'օգնեն մեզի ըմբռնելու Աստուծոյ նուէրը՝ անսահման վաղուան մը համար, ասոնք են որ կը գոհացնեն

հոգին:


«Այն բոլոր հեղինակներէն անոնք, որ կը թողուն մնայուն տպաւորութիւն, անոնք որ կը կորսնցնեն ինքզինքնին պատմութեան միացման ճգնաժամային պահուն, և միաժամանակ ինքզինքնին կը գտնեն հաւաքական լայն ինքնագիտակցութեան մէջ, անոնք են ամենէն պերճախօսները:

«Այսպիսին է եղած կեանքի ճանապարհորդութիւնը դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի: Արդ, այս նախաբանը նուիրուած է զգայուն հոգիով, մ ա ն կ ա կ ա ն սրտով, բանիմաց մտքով կենսաթրթիւ դաստիարակի մը, Բարի Լուրի առաքելի մը և առաջնորդող հաղորդակցողի մը: Սոցն հատորին մէջ ան նաեւ արտիստ մըն է հայկական յիշողութեան»:

Վեր. Հայտոսթեանի նախաբանին կը հետեւի դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի անգլերէն նախաբանն ու երախտագիտական խօսքը: Իմաստալից մտքերով, յիշողութիւններով ու ապրումներով գրուած իր նախաբանին մէջ, ան ի միջի ալ լոյս կը խօսի իր մեծօր՝ Ստեփանի մասին, որ յարատեւ, անմոռանալի ազդեցութիւն ունեցած է իր կեանքին վրայ: Փափաքողները կրնան մնացեալը կարդալ դիմելով կամ հեռաձայնելով «Երեւան» տպարան՝ (818) 246-2070) և հատորէն օրինակ մը (կամ օրինակներ) ապահովելով: Իսկ երախտագիտական բաժնին մէջ հեղինակը իր երախտագիտութիւնը կը յայտնէ Արամ Վեհափառին, Վեր. Փօլ Հայտոսթեանին, բոլոր հովանաւորներուն, յատկապէս «Երեւան» տպարանի սեփականատէր Սարգիս Թօփալեանին և հատորի կրաֆիկական ձեւաւորումը իրագործած արտիստ Մայք Յակոբեանին:

Կը յաջորդեն այցելուած 81 քաղաքներու անուններու ցանկն ու քարտէսը:

Իսկ GOING HOME!/Դէմի ՏՈՒՆ գրութեամբ կը սկսի ուխտագնացութիւնը դէպի Կիլիկիա, Կապադովկիա և Արեւմտեան Հայաստան: Մեկնարկը կը սկսի Պոլիսէն դէպի Ատանա օդային թռիչքով ու ապա կը շարունակուի ցամաքային ճամբով: Կ'այցելեն, ոչ անպայման թուածս անուններու կարգով՝ Իսկէնտէրուն, Թարսուս, Մերսին, Կորիկոս, Պէյլան, Մուսա Լեռ, Անտիոք, Գրքը-Խան, Չորք-Մարգպան (Տէօրթ Եոլ), Հասանպէյլի, Պէրէճիք, Քիլիս, Այնթապ, Մարաշ, Չէյթուն, Հաճըն, Էվէրէկ, Սիս, Թոմարգա, Ճուճուն, Կեսարիա, Աքսարայ, Պողազլեան, Ատիեաման, Սեվերեկ, Մարտին, Տիգրանակերտ, Էրճանի, Բալու, Խարբերդ, Մալաթիա, Կիլիկիա, Սեբաստիա, Առա, Չըմըշկաճագ, Արաբկիր, Ակն, Շապին Գարահիսար, Թամգարա, Երզնկա, Թերճան, Էրզրում, Ազրի, Թիւնճէլի, Մալազկերտ, Մուշ, Սասուն, Պիթ-



լիս, Աղթամար, Վան, Իգտիր, Տողուպաչագիտ, Արարատ լեռ, Անի, Կարս, Արտահան, Արդուին, Հօբա, Ռիզէ, Տրապիզոն, Կիրասոն, Օրտու: Արտահան, Արդուին, Հօբա, Ռիզէ, Տրապիզոն, Կիրասոն, Օրտու:

Այցելուած իւրաքանչիւր վայրէն վերցուած են խմբական թէ՛ անհատական մեծ ու պզտիկ նկարներ: Առաւել՝ կանգուն մնացած, մեծ մասամբ աւերակի, գոմի, պահեստանոցի կամ որեւէ բանի վերածուած հայկական բնակարաններու, եկեղեցիներու, վանքերու, ամրոցներու, ճարտարապետական կոթողներու, կամուրջներու, շուկաներու, քանդակներու նկարներ: Մանաւանդ լեռնային, դաշտային, ջրային բնական տեսարաններ: Դիտելով այդ խօսուն, վաւերական, պիպլիական խորհրդաւորութիւն ու գրաւչութիւն ունեցող տարածքները ներկայացնող նկարները, հոգիիդ, ներաշխարհիդ խորերէն կարծես կը լսես հոգին կանչը, կը զգաս հազարամեակներէն եկող նախնիքներուդ շունչն ու ոգին ու չես կրնար չլիչել Սարմէնի զայրացկոտ հարցումը՝ «Ո՞վ է ապրում այնտեղ հիմա. իրեն յաւէտ տէ՞ր է կարծում...»: Կամ չձայնակցիլ Անդրանիկ Մառուկեանին. «Պիտի հասնինք, սրբազան լեռ, կատարիդ»:

Արդ, «Ձայներ Լռութեան մէջ» հատորը, որմէ օրինակ մը ամէն հայ ընտանիք պարտի ունենալ, ես կը համարեմ մնայուն յուշարար մը՝ հայ ժողովուրդէն ցեղասպանութեամբ խլուած հազարամեակներու իր հայրենիք՝ պատմական Հայաստանի և Կիլիկիոյ մասին: Մեր դէմ կատարուած այս անհարկ անարդարութիւնը անգամ մը եւս կը յուշէ մեզի Չարենցեան հօր պատգամը. «Հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»:

Սիրելի Կարպիս, վստահ եմ, որ աստուածատուր շնորհներովդ պիտի շարունակես նուիրումդ ու ծառայութիւնդ Աստուծոյ փառքին, վասն մեր նահատակներու սուրբ կտակին և վասն Հայ ժողովուրդի արդար պահանջատիրական յողթանակին:

Խոշոր շնորհակալութիւն քեզի: Քաջառողջ երկար կեանքի և նորանոր յաջողութիւններու մաղթանքով՝ վարձքդ կատար:



# ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՇԻՆԱԿԱՆՆԵՐԻ ԶԵՐՈՍԱՄԱՐՏԸ (102-րդ Տարեդարձի առթիւ)

## ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Անտիոք քաղաքի Գալմագա-մը, (կառավարիչ) 1915 թուականի Յուլիսի 13-ին ազդարարութեան գիր էր ուղարկել «Մուսաների Լեռան» շէնքերի «Մուսթարներին» (գիւղապետ), եթ օրերի ընթացքում պատրաստ լինելու տարագրութեան:

Պատուելի Տիգրանը, Եօղու-նօլու գիւղի քահանայ՝ Աբրահամ Տէր-Գալուստեանի տանը, հինգ շէ-ների գիւղապետերի ու երեւելիներ-րի հետ խորհրդակցական ժողով գումարել, որին չէին մասնակցել Քէպուսիցի գիւղի երեւելիները: Տիգրանը պատմել էր գիւղ վերա-դարձի ճանապարհին հանդիպած տարագիր կարականների արհա-ւիրքի մասին: Որոշ կան իրական միակ միջոց՝ իրենց կանանց պատ-ուի ու հայրենի հողի պաշտպանու-թեան համար, յորդորել էր կռուի ելնել թշնամու դէմ, ապաւինել իրենց լեռներին, ծովից հնարաւոր փրկութեան լոյս որոնել եւ նաեւ պատերազմում թուրքիացի պար-տութեան հնարաւորութեանը: Իր յանդուգն առաջարկը պաշտպանել էր, շէնքերի մարդկանց անվերջութեան, նրանց լաւ նշանառու լինե-լուն, խիտ անտառներով մշուշոտ լեռների եւ նրանց միջով անցնող նեղլիկ ճամբաներին ծանօթ լինե-լուն:

Ապստամբել էր Արմին-Հայը, մերժել հնազանդիլ տարագրու-թեան գնալու դուշմանի գրին: Տիրողի դէմ կռուի ելնելու կրակ էր բոցավառուել լեռնականների արտե-րում, աշխարհ վերափոխելու, ո՛չ, իրենց հոգիներում նախի աստուածների ոգու անթեղուած կրակն էր նորէն կարմրում, վա-հագնի ստուերն էր ելել մուսաների լեռներ՝ կռիւ տալու դուշմանին, սպաննելու նրա յոխորտանքը ու գինուորին: Գիւղեր էին ժամանել ոստիկաններ... գիւղերում ոչ մի մարդ: Նրանք արդէն լեռների բարձունքներին էին: Մինչեւ կը պատրաստուէին ճամբար դնել, տե-ղատարափ անձրեւ էր տեղացել՝ շարունակել ամբողջ գիշերը: Դեռ չէին հասցրել խրճիթներ պատ-րաստել, թրջուել էին, թրջուել էր իրենց հետ բերած ուտելիքը: Յա-տուկ խնամքով կարողացել էին թրջուելուց պահպանել փամփուշտ-ների վերալիցքաւորման վառօդի ռազմամթերքի պաշարը: Յաջորդ օրը, գառիթափերի ռազմական նշա-նակութիւն ունեցող կէտերին խրա-մատներ էին փորել, որտեղ որ հողային չէր, ժայռերի պատնէշ-ների ամբողջութիւններ ստեղծել, իրենց Անգեղաց Տան Տորքի նման դուշմանի վրայ գլորելու, տեղա-բաշխել որոշ թուաքանակով հրա-ձիգների խմբեր: Հիւղակներ պատ-րաստել, զօրանոց պատել:

«Պաշտպանութեան խոր-հուրդ» ընտրելու համար, ժողո-վուրդի մասնակցութեամբ ընդհա-նուր ժողով էին գումարել, այն կատարել միսիւնարների ուսուցա-նած ժողովրդական ընտրութիւն-ների եղանակով: Թղթի պատա-ռիկներ հաւաքել, փակ-գաղտնի քուէաթերթիկներով ընտրութիւն կատարել: Ստեղծուել էր՝ դիմադ-րութեան գերագոյն իշխանութիւն իրականացնող՝ տասնըչորս ժողո-վականներից բաղկացած խորհուրդ, որի ատենապետն էր ընտրուել՝

Եօղունօլու գիւղի վերապատուելի Տիգ-րան Անդրէասեանը, իսկ ատենադ-պիրը՝ Միքայէլ Կէկէճեանը: Կռուող-ներին բաժանել են քառասուն երեք տասնապետներով տասնեակներ: Արտակարգ իրավիճակների հա-մար ստեղծել էին 33 քաջ մարդ-կանցից բաղկացած չէթէյական երեք խմբեր՝ խմբապետներն Եսայի Եա-ղուպեան, Պետրոս Տմլազեան, Պետ-րոս Տուտազեան: Տասը-տասներ-կու տարեկան տղաներից կազմա-կերպել էին «Թէյէֆոնի Տղաք» խումբ, մարտի դիրքերից՝ թշնա-մու յարձակումների լուրը կեդրոն հասցնելու: Մովսէս Տէր Գալուստ-եանը կարգուել էր «Առաքումի Տնօրէն-Սէվգիթաթ-Րէխի» օգնա-կաններ՝ Սերոբ Շէրպէթեան ու Տիգրան Գարահեան: Ըստ Տիգրան Անդրէասեանի, այն «Պատնէշնե-րու պահպանութեան համար հեր-թապահներ պիտի նշանակէր, պա-տերազմի ատեն օգնական զօրք ուղարկէր պէտք եղած մարտական դիրքեր, այն ենթակայ էր վարչա-կան Մարմին, կռուի համար կարե-ւոր քայլերը նրա հետ խորհրդակ-ցութեամբ եւ որոշումով կը գոր-ծադրուէին»: Ռազմամթերքի վե-րակացու էր նշանակուել Ներսէս Գազանճեանը, որը ռազմամթերք էր ուղարկել ռազմաճակատ, փամ-փուշտներ վերալիցքաւորել: Ստեղծ-ուէր էր գործաւորներու վաշտ՝ խրամատներ փորելու, նրանց առ-ջեւ անտառի շերտերը մաքրելու: Յուլիս 21-ին, Սուէտիայի Միւ-տիւր՝ հայատեաց ալպանացի խա-լէտը, երկու հարիւր կանոնաւոր բանակի գինուորներով յարձակում կատարել առաջապահ պաշտպա-նական դիրքերի վրայ, գոռոցացել, որ լեռ բարձրացողներին վար կը բերէր ու աքաղի կը տանէր: Արեւն էր եկել կանգնել կռուողների գիր-քերի վրայ, կարծես նախնիների կրակի աստուած «Ար-«Արա»-ն էր թշնամու գինուորի վրայ հուր տեղում, շինականները, արեւի ճա-ռագայթները որպէս շանթեր նե-տել դէպի լեռան բարձունք յարձա-կուողների վրայ: Նրա պատնէշնե-րից, Անգեղաց Տան Տորքի նման, ժայռեր գլորել դուշմանի գինուո-րի վրայ: Կրակ թշնամուն, առա-ջին փամփուշտը արձակել էր Եօ-ղունօլու գիւղի Մարգիս Գալաղեա-նը: Մինչեւ իրիկուն տեւած մար-տում, թշնամու կանոնաւոր բանա-կի գինուորը չէր կարողացել նուա-ճել նրանց պաշտպանական բար-ձունքը, պարտուել էր թշնամին: Մահացածներին ու վիրաւորներին մարտի դաշտից հանելով, խալէտը նահանջի հրաման էր արձակել:

Առաջին իսկ մարտում պարտուել էր դուշմանը, հայոց գէնքից, չէ՛, հայոց ոգու գէնքից: Գազագել էր կռուել տանուլ տուած դուշմանը: Երկու հազար գինուորներով գրո-հել Հաճի Հապապլի գիւղին մօտիկ «Պագաճգ» դիտակետի դիրքեր: Տասնըհինգ մարտիկների պահա-կախումը յախուռն դիմադրել էր, թշնամին որոշակի առաջխաղա-ցում կատարել, օժանդակ մարտիկ-ներով համալրուած պահակախումբը գնդակների տարափ տեղացել թշնամու առաջապահ ջոկատների վրայ, ստիպել դադարեցնել մար-տը: Այնուհետեւ, «Օմարէն Գի-տէյն» վայրում, կատարի ճակատա-մարտ էր տեղի ունեցել: Թշնամին, թնդանթ էր բերել կռուի դաշտ, ռմբահարել շինականների հրա-

ցանների արձագած ծուխի տե-ղանքները ու ժողովուրդի բնակու-թեան վայրը: Նրանց իւրաքան-չիւր զարկին հետեւել էին թնդա-նթի ու արդիական գէնքերի հա-մազարկեր: Պաշպանական կռուում թնդանթների արձակած ռմբե-րը հակա վնաս չէին պատճառել: Վնասագերծել էին չպայթած արկե-րը, վառօդը օգտագործել փամ-փուշտներ լիցքաւորելու: Ճակա-տամարտը սկսելուց առաջ անձրեւ էր տեղացել, թրջուել էին մար-տիկների հագուստները, սակայ բո-ցավառ էր մնացել իրենց կռուի ոգին: Կռուի եկած թուրքն էլ էր թրջուել, սակայն նրանց հին նմու-շի գէնքերն ու գինամթերքը գրեթէ անգործածելի էին դարձել: Անձրե-ւը աղէտաբեր էր եղել նաեւ լեռան բարձունք ապստանած ժողովուր-դի համար: Նոյնիսկ այդ պայման-ներում էլ թշնամին անկարող եղել առաջխաղացում կատարել ու նրանց պատնէշած դիրքերը նուաճել: Այդ կռուում վիրաւորուել էին երեք, իսկ քաջի մահով ընկել երկու մարտիկ-ներ, որոնցից Յակոբ Գարակէօզ-եանը (Ըլլէուն) մահն էր դիմաւոր-ել քաջին վայել խօսքով՝ «Դուք ինձմով մի՛ գբաղուէք, գացէ՛ք թշնա-մուն դիմադրեցէ՛ք»:

Երիտասարդ, առիւծասիրտ մի տղայ, Պետրոս Գալուստեան, (Որ-դին՝ Սարգիս Գալուստեանը, Եօ-ղունօլու գիւղի նախակրթարանի թուաքանութեան ուսուցիչն էր) մացառուտների ու ժայռերի մի-ջով ներքեւ սողալով, հասել տա-փակ ժայռի վրայ տեղաւորուած թնդանթի դիմացի քարաբեկորի ետեւ: Մարմինը ծառի ճիւղերով դարանակալ, այնքան մօտիկ էր եղել, որ լսել էր նրանց խօսակցու-թիւնը: Երբ թնդանթաճիգը իր տեսադաշտում երեւանցել էր, առա-ջին կրակոցով սպաննել նրան, յաջորդական հինգ կրակոցներով սպաննել միւս չորսին: Անկարող էին եղել նշմարել նրան, սարսա-փահար հրամանատարը հրամայել պատսպարուած տեղ տանել թնդա-նթը:

Լեռնականների կռուի կորովը ստուգելու նպատակով, դուշմանի առաջապահ վաշտերը մօտեցել էին լեռան պաշտպանական չորս տեղա-մասերին, Տամլաճրգի կողմի յար-ձակումը ապարդիւն է անցել, բար-ձունքներից ժայռեր գլորելով դուշ-մանին ստիպել նահանջել: Թշնա-մու ընդհանուր յարձակումը սկսել էր շնախատեսած տեղանքներից, որոնց վաշտերը մի քիչ առաջնա-լուց յետոյ երկու խումբերի բա-ժանուել: Մէկ խումբը արշաւել է դէպի Թաթարալանի, իսկ միւսը արեւմտեան կողմից թափանցել ան-տառ: Նոյն եւ յաջորդ օրը դուշմա-նի երեք հազար զօրքը եւ երեքից չորս հազար աւարառու խուժանը խելայեղ կրակ էին տեղացել հայե-րի պաշտպանական դիրքերի վրայ: Թշնամին, Թաթարալանի շրջա-նի արտերից անցնել ու մտնել անտառի եզերքը: Լեռնականները անվրդով պաշտպանուել էին: Դուշ-մանը, քէպուսիէ գիւղի երկու մարդ-կանց առաջնորդութեամբ, առա-ջացել անտառի խորքերը, մօտեցել հիւղաւանին, գնդակոծել այն ու զօրանոցը: Լեռնականները յախուռն հակաարձակումով դուշմանին հար-կադրել էին նահանջել, գերավարել իրենց առաջնորդած մարդկանց՝ հրապարակաւ մահապատժի են-թարկել: Այդ ձև կատարամարտում գոհուել էին ու թր լեռնականները, վիրաւորուել հինգը, որոնցից երե-քը յետոյ մահացել: Երկու լեռնա-կաններ, շարունակել էին դիմադ-

րութիւնը, թշնամու կողմից պա-շարուելով սպաննուել: Վանէս Գո-ճէնեանի (Ֆէնտը) մէկ փողանոց գէնքը ցուցադրել էին Սուէտիա գիւղաքաղաքի փողոցներով, յայ-տարարել՝ այդ գէնքի տէրը հինգ գինուորներ էր սպաննել:

Հետախույզները տեղեկացրել էին, որ թշնամու զօրքը կիրճերում է, նուաճել մի շարք քարափներ ու բարձունքների գագաթներ: Պաշտ-պանական այդ կարեւոր դիրքե-րում լեռնականների միացն փոք-րիկ խմբեր էին տեղակայուած եղել: Այդ առաջխաղացումները չէին շարունակուել, անոնք կեղծ յարձակումներ էին եղել: Այնուհե-տեւ, մեծաքանակ ուժերով մէկ կիրճի միջով գանգուածային յար-ձակում սկսել, սպաննել էին հետա-խույզներին, թափանցել կարեւոր մի լեռնանցք: «Պաշտպանական խորհուրդը» գնահատելով ռազմա-կան իրադրութեան վտանգը, հա-մախմբել էր զօրական ուժերը: Դուշմանը բուռն գրոհ էր սկսել դէպի լեռան բարձունքներ: Թուա-քանակով նրանք շատ-շատ աւելի էին եղել, նրանց գէնքերի հասողու-թիւնը գերազանցել էր լեռնական-ների գէնքերինը: Մինչեւ իրիկնա-մուտ, դուշմանի երեք վաշտեր առաջ էին շարժուել անտառի խիտ մացառուտների միջով, հասել հիւ-ղաւանի խրճիթներից հինգ հա-րիւր մեթր հեռաւորութեան վրայ: Խորը ու խոնաւ կիրճ էր հիւղաւա-նի ու դուշմանի վաշտերի միջեւ, գերադասել էին տեղաւորուել բաց օթեւանում, քան թէ յարձակումը շարունակել գիշերուայ մութին:

«Լուսին չկար, մութ գիշեր էր», Աստղիկ դիցուհին մշուշով պատել էր լեռան բարձունքները, մարել աստղերի ու անուշ լուսնեա-կի հաշուկները: Մթնել էր հիւղա-ւանը, մթնել էր մուսաների լեռը: Ահա այդ գիշերն էր իրենց «Մահ կամ ազատութիւն» ժամը: «Պաշտ-պանական խորհուրդ»-ի մարդիկ ըմբռնել էին, որ ճգնաժամային վիճակի մատնուել: Փրկուելու միայն մէկ միջոց կար: Կէս գիշերուայ մթին, սողոսկել թրքական ջոկատ-ների օթեւանի շուրջը, իրակա-նացնել օղակաձեւ շրջապատում, յանկարծակի ու միաժամանակ-ուայ հրաձգութեամբ մօտենալ նրանց օթեւանին, անհրաժեշտու-թեան դէպքում յարձակումը աւար-տել ձեռնամարտի անսպասելի ընդ-հարումով: Եթէ, իրենց քաջի երթը ձախողուէր, իրենց արեամբ թող սրբագործուէր հայրենեաց լեռնե-րի հողը, ահա թէ նրանց համար ինչ էր նշանակում «Վասն Հայրենե-ացը»-ը: Ի՞նչ ձախողում, քաջին վայել է վահանը ձեռքին վերա-դառնալ տուն: Քարափներին ու մացառուտներին քաջատեղեակ լեռ-նականները արտակարգ հմտու-թեամբ սողացել մութ ու խոնաւ անտառների միջով: Շրջապատու-մը աւարտուել էր, չէթէյական մի խմբի յանդուգն պետի՝ Եսայի Եա-ղուպեանի «Հիւճում» (գրոհ) կան-չով, լեռնականների գէնքերի միա-տեղ շաչիւններով յարձակում իրա-կանացրել, քաջերը գրոհում էին, լեռան ձորերն էին ողջուում նրանց: Մի քանի ըրպէնքերի ընթացքում թշնամու շարքերում խուժապ էր առաջացել, նրանց ճամբարում ծայր աստիճանի խառնաշփոթութիւն տի-րել, դուշմանի գինեակները շտա-պել էին գիշերուայ խաւարին այս ու այն կողմը փախչել, սայթաքել ժայռերի ու կոճերի վրայով: Սպա-ները հակասական հրամաններ էին



### ՃՇՍԱՐՏՈՒԹԻՒՆԸ՝ ՍԻՐՈՅ ԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

1. Չկայ երկրորդ կէս հասկացութիւն. Մեր կեանքի ճանապարհին մենք կը հանդիպինք շատ տարբեր մարդոց, որոնք կը լեցնեն մեր կեանքը եւ իմաստ կու տան անոր: Երբեմն այդ մարդիկ մեր հետ կը մնան ամբողջ կեանքի ընթացքին, երբեմն՝ ընդամէնը քանի մը օր, ամիս կամ տարի: Ամենաաքանչէրին այն է, որ անոնցմէ իւրաքանչիւրը մեզի որեւէ բան կը սորվեցնէ կեանքի եւ իր մասին: Եւ նոյնիսկ ամենացաւոտ բաժանումները հնարաւորութիւն են հասկնալու, թէ մենք ով ենք կամ ալ ով չենք իրականութեան մէջ: 2. Միշտ կայ ռեւէ մէկը, որ մեզ կը համապատասխանէ. Կարեւոր է, թէ ինքնագարգացման որ փուլին ենք, մենք կրնանք գրաւել զայն, որուն մենք արժանի ենք: Ատիկա տեղի կ'ունենայ այն ժամանակ, երբ մենք կը հասկնանք, որ ինքնաբաւ ենք առանց որեւէ կէսի: Այդ ատեն մենք կը հանդիպինք նոյնպիսի ինքնաբաւ մարդու:

3. Մէրը պայմաններ չի ճանչնար. Սիրել կրնայ մեզմէ իւրաքանչիւրը: Եթէ կը զգանք, որ պէտք է փոխուինք, որ մեզ սիրեն, կը նշանակէ, մենք սխալ մարդու հետ ենք: Կամ ալ խնդիրը մենք ենք, մեր ցած ինքնագնահատակա-

նը, իբր մենք արժանի չենք այդ մարդուն: Ան, զոր կը գրաւենք մենք, մեր ինքնարժեքի արտացոլացումն է: Ուրեմն պէտք է նախ մենք մեզ սիրենք: 4. Մենք կրնանք շատերը սիրել. Սէրը չի վերջանար, եթէ մենք անկէ չափազանց շատ տուած ենք մէկ մարդու: Սէրը կը սնուի սիրով: Որքան շատ մենք կու տանք, այնքան շատ կ'ունենանք անկէ: Մենք կրնանք անսահմանօրէն սիրել շատ մարդիկ, տարբեր պատճառներով եւ շատ բնական է մարդոց ըսել այդ մասին: 5. Ամէն ինչ քեզմէ կ'ախտաւ չէ. Եթէ դուն ազնիւ ես, քնքուշ, բարի անոր հանդէպ, որուն կը սիրես, բայց ան կը կոտորէ սիրտդ, ատիկա չի նշանակեր, թէ դուն որեւէ բան սխալ ըրած ես: Ամէնէն յաճախ ան է, որ պատրաստ չէ սիրոյ նման մակարդակի: Եւ իւրաքանչիւրը իր սրտին մէջ ունի իր վերքերը, որոնք անհրաժեշտ է բուժել: Բայց ամէն մէկը չէ, որ պատրաստ է նման բուժման:

6. Ցաւը չաւէրժ չէ. Երբ մեզիցաւ կը պատճառեն, պէտք է ընդունիլ զայն եւ վերապրել: Այդպէս միշտ չ'ըլլար, բայց կարեւոր է ընդունիլ զայն, որպէսզի սկսիք վերականգնման գործընթացը եւ առաջ շարժիք:

### 3 ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ, ՈՐՈՆՔ ԶԵՐ ԱՌԱՒՕՏԸ ԲԱՐԻ ԿԸ ԴԱՐՁՆԵՆ

1. «Աստուած կու տայ անոր, որ շուտ կ'արթննայ»: Սկիզբի համար պէտք է սորվիլ կանուխ արթննալ: Կը թուի, թէ դժուար է, բայց կանուխ արթննալը կ'երաշխաւորէ առաւօտեան հրաշալի առօրեութիւն, ի հարկէ ժամանակին քնանալու պայմանով: Արթննալու իտէլական ժամանակ կը համարուի առաւօտեան 6-ը եւ աւելի շուտ: Իզուր չէ, որ մեր նախնիները կ'արթննային մայրամուտի հետ եւ՝ առանց որեւէ զարթուցիչի: Աւելի ուշ արթննալը յղի է հոգեւորական վիճակի խանգարումով, որոշ հիւանդութիւններու սրումով, դիմադրողականութեան նուազումով, գլխացաւերով, մեծ խորժակով եւ նոյնիսկ ճնշախտով:

Փորձեցէք գոնէ մէկ շաբաթ քնանալ 22-23:00-էն ոչ ուշ եւ արթննալ 6:00-ին: Հետեւեցէք ձեր ինքնագարգացողութեան եւ տրամադրութեան: Վստահ եղէք, որ դուք գրեթէ անմիջապէս դրական պիտի զգաք: Եւ այն պատրուակը, թէ դուք «բու» էք, արդարացում չունի: Մենք բոլորս ի բնէ «արտոյտներ» ենք, ատիկա մեր մէջ դրուած է բնութենէն, ուր մայրամուտին հետ բոլոր կենդանի արարածները կը քնանան, իսկ կ'արթննան արեւածագին հետ: Մեզմէ շատերուն «բու» դարձուցած է քաղաքակրթութիւնը, կեանքի խելայեղ արագութիւնը եւ յառաջացած ճարտարագիտութիւններու դարը, բայց զայն կարելի է շտկել դիւրութեամբ: 2. «Պատրաստուի՞ր մարմնամարզութեան»: Սովորութիւն դարձնելով կանուխ արթննալը, մենք քանի մը վայրկեան ազատ ժամանակ պիտի ունենանք, որոնք կարելի է անցնել՝ կատարելով առա-

ւօտեան վարժութիւններու համալիր: Բայց մարմնամարզութիւնը մի խառնէք սիրով լիարժէքօրէն զբաղելուն հետ: Մարմնամարզութիւնը ուղղուած է ներքին օրկաններու աշխատանքի աշխուժացման, արեան շրջանառութեան բարելավման, կապերու եւ յօդերու մարզումին, որ պիտի օգնէ օրուան ընթացքին խուսափելու սովորական կենցաղային վնասուածքներէն: Այդ պատճառով ձեզի համար առանձնացուցէք 10-15 վայրկեան, հանգստացուցէք մկաններու հիմնական խումբերը, կատարեցէք քանի մը պարզ վարժութիւն: Իտէլական առաւօտեան մարմնամարզութիւնը, զայն բնութեան գիրկին մէջ կատարելն է՝ թոքերը թթուածինով հարստացնելով: Բայց սովորական բնակարանի պայմաններուն մէջ հնարաւոր է պարզապէս օդափոխել սենեակը: Կանոնաւոր կերպով մարմնամարզութիւն կատարեցէք ամէն օր, ներառեալ հանգստեան օրերուն եւ մի մոռնաք անկէ առաջ կիրտոնի շերտիկով 1-2 բաժակ տաք ջուր խմել: 3. Տաք եւ պաղ ցնցուղներ. Այո, առաւօտեան ծէսերը պէտք է աւարտել տաք եւ պաղ ցնցուղներով: Տաք եւ պաղ ցնցուղներուն հերթագայութիւնը կ'աշխուժացնէ արեան շրջանառութիւնը, կ'աշխուժացնէ նիւթափոխանակութիւնը, կը բարելաւէ դիմադրողականութիւնը եւ կը մարզէ մարմինը ընդհանուր առմամբ: Մէկ խօսքով, անիկա առօրեութեամբ կը լիցքաւորէ ամբողջ օրուան համար: Առաւօտները այս ոչ բարդ սովորութիւնները իրականացնելով՝ պիտի նկատէք, որ «առաւօտը բարի չէ» ասոյթը հաստատ ձեր մասին չէ:

### ՉՈՅԳԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԸ ԿԻՍԵՆ ՏՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԱԻՆԻ ԵՐՁԱՆԻԿ ԵՆ

Կ'ըսեն, որ իրական տղամարդիկ պէտք է երթան աշխատանքի եւ ընտանիք պահեն: Իսկ անոնց գեղեցիկ կէսերը այդ ժամանակ պէտք է մնան տունը, խնամեն փոքրիկները եւ ընտանեկան յարմարաւէտութիւն ստեղծեն: Սակայն, եթէ ձեր ժամացոյցը քանի մը տասնեակ տարիներով ետ չէ մնացած, ուրեմն դուք պիտի ըսէք, որ դերերու այդպիսի տեղաբաշխումը շատոնց արդէն արդիական չէ:

Այժմ աղջիկները տղամարդոցմէ ոչ պակաս կը հետեւին իրենց ասպարէզին եւ ամէն օր աշխատանքի կ'երթան: Վերադառնալով, սակայն, անոնք ամբողջութեամբ կը լծուին տնային գործերուն՝ մաքրութիւն ընել, ընթրիք պատրաստել, ամանները լուայ: Հաւանաբար անոնց տղամարդիկը ուղղակի տեղեակ չեն այն հետազօտութիւններուն մասին, որոնք ապացուցած են, որ տնային պարտականութիւններուն բաժանումը սիրահարներուն կեանքը աւելի երջանիկ կը դարձնէ: Առաջին այսպիսի հետազօտութիւնը կատարած մասնագէտը ուսումնասիրած է բազմաթիւ գոյգեր եւ եկած այն եզրակացութեան, որ կենցաղային պարտականութիւններուն բաժանումը յարաբերութիւններու ներդաշնակու-

թեան գրաւականն է: Քիչերն են, որ կը սիրեն տնային գործերով զբաղիլ: Սա կայն, եթէ տղամարդը կ'օգնէ իր տիկնոջ, վերջինս կը զգայ, որ զինք կը գնահատեն եւ աւելի քիչ կը վրդովի: Բացի այդ, պարտականութիւններու հաւասար բաժանման պարագային՝ սիրահարները աւելի ուշ կը յոգնին, բան մը, որ կը նշանակէ, որ անոնց ուժերը պիտի բաւեն մինչեւ ուշ գիշեր: Այս հասարակ գաղտնիքը կրնայ փրկել զանոնք, որոնք նոր կը սկսին ընտանեկան կեանքը: Երկու տարիէն ոչ աւելի ամուսնացած 220 գոյգերու հարցումը ցոյց տուած է, որ պարտականութիւններու հաւասար բաժանումը կ'օգնէ անոնց վերապրելու ընտանեկան առաջին խնդիրները եւ հասնելու փոխըմբռնման: Այսպիսի փոքր բացայայտումները ցոյց կու տան, թէ որ քան կարեւոր է ընտանեկան կեանքին մէջ կիսել ոչ միայն երջանիկ պահերը, այլ նաեւ ձանձրալի ամէնօրեայ գործերը: Եւ այսպէս, եթէ կ'երազէք ամուր եւ առողջ յարաբերութիւններ ունենալ, մի մոռնաք կիսել կենցաղային գործերը: Տղամարդիկ ուղղակի պէտք է աւելի յաճախ առաջարկեն իրենց օգնութիւնը եւ երջանկութիւնը երկար սպասեցնել չի տար:

### ՅԱԶՈՂԱԿ ԿՆՈՋ 7 ՈՍԿԷ ԿԱՆՈՆ

-Սորվիր երջանկութիւն ճառագել: Երջանկութիւն ճառագող կինը ուժեղ մազնիս է տղամարդոց համար: Ապացուցուած է, որ եթէ երջանիկ ժպիտ «նկարես», կը մտնես անհրաժեշտ վիճակի մէջ, իսկ յետոյ կու գայ իրական երջանկութիւնը:

-Գիշեր-ցերեկ մի մտածեր այն մասին, թէ դուն որքան պէտք է բարձրացնես ինքնագնահատականդ: Չափէն մեծ ցանկութիւնը երբեմն խոչընդոտ կը դառնայ սեփական ինքնաիրացման ճանապարհին: Ուղղակի ապրիր եւ հաւատա՛, որ կը հասնիս այն ամէնուն, զոր կը փափաքիս:

-Կորչի կատարելութեան աւելորդ ձգտումը: Արտօնէ դուն քեզի անկատար ըլլալ: Նոյնիսկ եթէ որեւէ բան ուրիշներէն վատ կ'ընես, ատոր իրաւունքը ունիս, դուն պարտաւոր չես ամէն ինչի մէջ իտէլական ըլլալու:

-Մոռցիր վախերու մասին: Պատկերացուր, թէ տեղի ունեցած է այն, ինչէն դուն այնքան կը վախնայիր՝ ամենավատը: Նախապէս տարբերակներ մտածէ, թէ ինչպէս վարուիս այդ պարագային: Եւ ինչ, որ ինքնագնահատականը բարձրացնելու համար օգտակար է որեւէ, նոյնիսկ բացասական փորձը:

-Գործերը մի յետաձգեր: Որքան երկար կը պատրաստուիս որեւէ բան սկսելու, այնքան անորոշ կը թուիս դժուարութիւնները:

-Մի վախնար նոր բան սորվելն եւ զայն փորձելն: Դուն չես գիտեր, թէ երբ ատիկա քեզի ծառայութիւն պիտի մատուցանէ:

-Հետեւիր արտաքինիդ: Մարգասրահ, լողաւազան, դիմալարդար, վարսալարդար: Ոչինչ այնքան չի բարձրացնիր ինքնագնահատականը, որքան նոր կերպարը, նոր սանտրուածքը:

### ՈՒՐՑՈՎ ԹԵՅԻՆ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ուրցը իւրաքանչիւր բոյս է, որ մարդկութեան յայտնի է հին ժամանակներէն: Անիկա ունի հաճելի համ եւ բուժիչ յատկանիւններ: Ուրցը ունի մանրէասպան, ցաւազրկող, պրոնիտները լայնցնող յատկանիւններ: Անիկա արագ կը վերականգնէ վնասուած քնքերը, մարմինէն դուրս կը հանէ որդերը: Ուրցը նաեւ կը կարգաւորէ նիւթափոխանակութիւնը, որ չափազանց կարեւոր է անոնց համար, որոնք կը հետեւին իրենց կշիռ քնին:

Ուրցի չորցած ծաղիկներով թէյը խորհուրդ կը տրուի անոնց, որոնք կը տառապին անքնութենէ: Ուրցով թէյը նաեւ կը հանգստացնէ ռոմբութիզմի եւ արթրիտի ժամանակ յառաջացած ցաւերը: Այս բոյսը կ'օգտա ործուի թոքային շարք մը հիւանդութիւններու պարագային, օրինակ՝ ազմա, պրոնիտիտ եւ այլն: Ուրցով ըմպելիներ ֆառորդ գաւաթ ջուրին աւելցուցէք 1 թ/դ չորցուած ուրց: Եւացուցէք եւ ձգեցէք հանգչի 10 վայրկ-

եան: Լեցուցէք գաւաթի մէջ, աւելցուցէք եռացացած ջուր եւ 5-7 վայրկեան եւս ձգեցէք մնայ, ապա՝ քամեցէք ու վայելեցէք համեղ թէյը: Ուրցը, սակայն, խորհուրդ չի

տրուիր կազթրիթ, ստամոքսի խոց, վահանագեղձի խնդիր, շաքարախտ ունեցող մարդոց: Յղիներուն եւ փոքրիկներուն խորհուրդ կը տրուի հարցնել բժիշկի կարծիքը:





### Հենրիխ Մխիթարեանի Կոլը Օգնեց «Մանչեսթեր Եունայթդին» Ջախջախել Մրցակցին



«Մանչեսթեր Եունայթդը» ֆուտպոլի Անգլիայի Պրեմիեր լիգայի 5-րդ տուրում իր յարկի տակ 4:0 հաշվով ջախջախեց Լիւսերպոլի «Էվերտոնին»:

Հանդիպման արդէն 4-րդ րոպէին Վալենսիան բացեց հաշիւը եւ առաջ մղեց տանտէրերին: Դրանից յետոյ, սակայն, մանչեսթերցիները երկար ժամանակ չէին կարողանում ամրապնդել յաջողութիւնը: «Կարմիր սատանաներին» այդ հարցում օգնեց Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը, որը 83-րդ րոպէին կրկնապատկեց հաշիւը՝ խփելով իր անդրանիկ կոլը Անգլիայի ընթացիկ առաջնութիւնում: Հինգ րոպէ անց հայ ֆուտպոլիստը փոխարինուեց, սակայն նրա խաղընկերները շարունակեցին իր կողմից սկսած գործը եւ վերջին րոպէներին եւս երկու կոլ գրանցեցին «Էվերտոնի» դարպասը: Աչքի ընկան Լուկակուն ու Մարսյալը:

«Մանչեսթեր Եունայթդը» այս յաղթանակից յետոյ վաստակեց 13 միաւր եւ հաւասարուեց առաջնութեան առաջին տեղում գտնուող «Մանչեսթեր Սիթիին»:

### «Մանչեսթեր Սիթին» Յաղթեց՝ 6:0, «Լիվերպոլը» Միաւորներ Կորցրեց

Անգլիայի առաջնութեան 5-րդ տուրում «Մանչեսթեր Սիթին» արտագնայ հանդիպում անցկացրեց «Ուոթֆորդի» հետ եւ առաւելութեան հասաւ 6:0 հաշվով: Հեթտրիկի հեղինակ դարձաւ արգենտինացի յարձակուող Սերխիո Ագուերոն: Կատալոնացի խոսեպ Գուարդիոլայի գլխավորած թիմը 13 միաւորով առաջին տեղում է:

«Լիվերպոլը» ընդունեց «Բարնլիին» եւ բաւարարուեց ոչ ոքի արդիւնքով՝ 1:1: Գերմանացի Յուրգեն Կլոպի գլխավորած թիմը 8 միաւորով 6-րդ տեղում է:

«Քրիսթալ Փելասը» դարձաւ անգլիական ֆուտպոլի ուժեղագոյն դիւրիւրի միակնի պատմութեան մէջ առաջին թիմը, որը առաջին հինգ տուրերում կրում է պարտութիւն եւ չի խփում ոչ մի կոլ: 5-րդ տուրում «Քրիսթալ Փելասը» նուազագոյն հաշվով պարտուեց «Սաութհեմփթոնին»:

### Սոնա Ասատրեանը՝ Եւրոպայի U-18 Առաջնութեան Յաղթող

Ռումինիայում աւարտուած շախմատի տարբեր տարիքային խմբերի Եւրոպայի պատանեկան առաջնութիւններում Հայաստանի ներկայացուցիչներից գերազանց արդիւնք է ցոյց տուել Սոնա Ասատրեանը, որը մասնակցել է մինչեւ 18 տարեկան աղջիկների մրցաշարին:



9 հնարաւորից վաստակելով 7 միաւոր՝ Սոնա Ասատրեանը նուաճել է յաղթողի կոչումը: Նա կէսական միաւոր է առաջ անցել 2-4 տեղը բաժանած հետապնդողներից:

Մինչեւ 16 տարեկան աղջիկների պայքարում Հայաստանի ներկայացուցիչ Աննա Մ. Սարգսեանը 7 միաւորով բաժանել է 2-4-րդ տեղերը: Լրացուցիչ ցուցանիշով նա ճանաչուել է չորրորդը:

### «Գանձասար-Կապան» Ուժեղ էր «Արարատից»

Ֆուտպոլի Հայաստանի Բարձրագոյն խմբի առաջնութեան 6-րդ տուրում «Գանձասար-Կապանը» մրցեց «Արարատի» հետ եւ առաւելութեան հասաւ 2:0 հաշվով: Աւելացուած րոպէներին մրցաժամը հեռացրեց «Արարատի» գլխավոր մարզիչ Արկադի Անդրեասեանին, որը վերաւորանքներով արձագանքեց եւ հրաժարուեց էր թողնել տեխնիկական գոտին:

«Գանձասար-Կապանը» 5 միաւորով չորրորդ տեղում է՝ նոյնքան միաւոր վաստակած «Փիւնիկին» գերազանցելով կոլերի տարբերութեամբ: «Արարատն» ունի 4 միաւոր եւ եզրափակում է մրցաշարային աղիւսակը: Առաջատարը Գիւմրիի «Շիրակն» է՝ 15 միաւոր:

### «Ռեալ» Մադրիդի Համաշխարհային Ռեկորդը

Մադրիդի «Ռեալը» բացառիկ համաշխարհային նուաճում է սահմանել: Արքայական թիմն արդէն 72 հանդիպումներում անընդմէջ խաղադաշտից չի հեռանում առանց կոլ խփելու: Այդ խաղերում «Ռեալը» խփել է 197 կոլ:

Յաջորդ հանդիպումը ֆրանսացի Ջինեդին Ջիդանի գլխավորած թիմը կ'անցկացնի Սեպտեմբերի 17-ին՝ Սպանիայի առաջնութեան չորրորդ տուրում հիւրընկալուելով «Ռեալ Սոսիեդադին»:

### «Աթլետիկո» Մադրիդը Յաղթեց Նոր Ստադիոնում Անցկացուած Առաջին Խաղում


Մադրիդի «Աթլետիկոն» առաջին հանդիպումն անցկացրեց նորաբաց «Վանդա Մետրոպոլիտանո» ակումբային ստադիոնում: Սպանիայի առաջնութեան չորրորդ տուրի «Աթլետիկո» - «Մալագա» խաղին նախորդեց վերակառուցուած ստադիոնի բացման հանդիսաւոր արարողութիւնը:

Նոր ստադիոնում առաջին կոլը խփեց «Աթլետիկոյի» ֆրանսացի յարձակուող Անտուան Գրիզմանը:

«Աթլետիկոն» յաղթեց նուազագոյն հաշվով եւ 8 միաւորով բարձրացաւ ընթացիկ երրորդ տեղ:

### Գուարդիոլա. Ոչ Որ Զի Կարող Համեմատուել Մեսիի Իետ

Անգլիական «Մանչեսթեր Սիթիի» կատալոնացի գլխավոր մարզիչ Նոսեպ Գուարդիոլան հերթական անգամ հիացմունքով է խօսել արգենտինացի յարձակուող Լիոնել Մեսիի մասին, որի հետ աշխատել է «Բարսելոնայում»:



«Ոչ ոք չի կարող համեմատուել Մեսիի հետ: Նա աչքի է ընկնում գրեթէ բոլոր հանդիպումներում: Մրցաշրջանի ընթացքում խփում է 60-70 կոլ: Նա խաղում է երեք օրը մէկ եւ երբեք վնասուածք չի ստանում: Մեսին ամբողջութեամբ վերահսկում է իր մարմինը:

Մրապէին պէտք է համեմատել երիտասարդ տարիների Մեսիի հետ: Հնարաւոր է՝ նա կը հասնի այդ մակարդակին: Մրապէն գերազանց խաղացող է, բայց պէտք է հետեւել նրա կարիերայի ընթացքին», - Գուարդիոլայի խօսքը մէջբերում է BBC-ն:

Յիշեցնենք, որ Մրապէին ձեռք բերելու ցանկութիւն ունէին «Մանչեսթեր Սիթիին», «Ռեալն» ու «Բարսելոնան», սակայն Ֆրանսայի հաւաքականի ֆուտպոլիստը «Մոնակոյից» տեղափոխուեց ՊՍԺ:

### «Նապոլին» Յաղթեց 6-0 Հաշվով Եւ Բարձրացաւ Առաջին Տեղ

Իտալիայի առաջնութեան չորրորդ տուրում «Նապոլին» տանը 6:0 հաշվով պարտութեան մատնեց «Բենեւենտոյին» եւ 12 միաւորով գլխավորեց մրցաշարային աղիւսակը՝ նոյնքան միաւոր վաստակած «Եուվենտուսին» եւ «Ինտերին» շրջանցելով կոլերի տարբերութեամբ:

«Միլանը» 2:1 հաշվով առաւելութեան հասաւ «Ուդինեզէի» նկատմամբ եւ 9 միաւորով չորրորդն է, «Տորինոն» 8 միաւորով 5-րդն է:

### «Մոնակոյի» Յաղթանակը, Ֆալկաոյի Դուբը

Ֆրանսայի առաջնութեան 6-րդ տուրում խոյեանի տիտղոսը պաշտպանող «Մոնակոն» տանը խաղաց «Ստրասբուրգի» հետ եւ առաւելութեան հասաւ 3:0 հաշվով: Դուբը եւ կոլային փոխանցման հեղինակ դարձաւ կոլումբացի յարձակուող Ռադամել Ֆալկաոն:

«Մոնակոն» 15 միաւորով հաւասարուեց առաջատար ՊՍԺ-ին, որը մէկ հանդիպում քիչ է անցկացրել:

Հ.Մ.Ս. ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԵՐՈՒ  
ՅԱՋՈՐԴ ԽԱՂԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ  
H.M.M. SOCCER TEAMS  
NEXT GAME SCHEDULE



HOMENMEN SAHARA TEAM  
- Sunday 9/17/17 5:35 pm  
Homenmen Sahara VS LA Suns  
Griffith Park

HOMENMEN ANGEL TEAM  
- Sunday 9/24/17 5:35pm  
Homenmen Angel VS FC Galaxy  
John Ferraro soccer field #5 Zoo Drive



### ՔԵԱՄԱՐԱ ԶԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԲ

Շարունակուած էջ 8-էն

րով: Գաւառի քսան զիւղերի համառօտ պատմութիւնը ներկայացուեց, կատարուեց գեղարուեստական ծրագիր եւ հիւրասիրութիւն: Դա յանձնախմբի առաջին քայլն էր, որը արժանացաւ գովասանքներին: Արդէն իսկ ձեռնարկուել է այդ գաւառի պատմութիւնը ներկայացնել ստուար մի գրքով, որի շնորհանդէսը պիտի մեծ շուքով կատարուի նպատակ ունենալով վառ պահելու գաւառի յիշատակները եւ պատար կանգնել հայապահպանման աշխատանքներին:

Յանձնախմբը նաեւ իւրաքանչիւր Հայաստանի հիմնադրամի թե-

լեթնին իր նիւթական օժանդակութիւնն է բերում իր կարողութեան համապատասխան օգտակար լինելով հայրենիքին եւ Արցախին:

Սրտանց յաջողութիւն ենք մաղթում Քեամարա հայրենակցական յանձնախմբի ազգանուէր ու հայրենանուէր ծառայութիւններին:

Նոր Յանձնախմբի կազմը նախկինի հետ համեմատած որոշ փոփոխութիւններ է կրել, որը ըստ հետեւեալի տեղեկացում է հանրութեան: Ռ. Կորիւնի ներկայութիւնը նկարում որպէս գրքի խմբագիր առնչուած է «Քեամարա գաւառը եւ նրա հայազգաբնակչութիւնը» անունով ստուար գրքի հետ, որը մօտ օրերս լոյս է տեսնելու:

### ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակուած էջ 8-էն

Վենետիկ ժամանած Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացուցիչ Եգնիկ Սրբգ. Պետրոսեանի, ՀՀ Սփիւռքի Նախարար Տիկ. Հրանդ Յակոբեանի եւ ՀՀ Վատիկանի Դեսպան Տիար Միքայէլ Մինասեանի եւ ՀՀ Հռոմի Դեսպան՝ Տիկ. Վիկտորիա Բաղդասարեանի: Յաջորդաբար, ժամը 18ին, Սուրբ Մարկոսի մայր տաճարին մէջ կատարուեցաւ երեկոյան ժամերգութիւն, ըստ հայկական ծէսի, Վենետիկի Պատրիարք՝ Գերպ. Տ. Ֆրանչեսկօ Մոռալիայի ներկայութեամբ:

Ամսոյն 10ին, ժամը 11ին, Գերպ. Տ. Լեւոն Արք. Զէքիեան մատուցանեց հանդիսաւոր Ս. Պատարագը Սուրբ Ղազարու Մայրավանքին եկեղեցւոյ մէջ՝ դարձեալ Վենետիկի Պատրիարքին, Վեհափառին եւ ՀՀ պաշտօնական ներկայացուցիչներուն ներկայութեան: Պատարագին յաջորդեց Միաբանութեան կողմէ հիւրասիրուած ճաշկերոյթը բոլոր հրաւիրեալներուն եւ ներկաներուն համար:

Նոյն օրը, ժամը 15 անց կէս, Սուրբ Ղազարու Միաբանութեան Մայրավանքին հիմնարկէքին նուիրուած ցուցահանդէսին բացումը կատարուեցաւ: Ցուցահանդէսը պաշ-

տօնապէս տեղի կ'ունենայ Մայրավանքի ցուցասրահներուն մէջ եւ պիտի շարունակուի մինչեւ Սեպտեմբեր 2018:

Ցուցահանդէսի բացման, ժամը 17ին, յաջորդեց Գասպար Եղեւիտ Անասիւրի երգչախումբին ելոյթը, ժուտին Բապաչչոյի ղեկավարութեամբ, եւ Արամ Իփէքճեանի դուդուկի ընկերակցութեամբ:

Ներկայ մամուլի հաղորդագրութեամբ Միաբանութեան Միաբանութիւնը պաշտօնապէս կը յայտնէ որ յօբեկրական տարուան ընթացքին բազմաթիւ գործունէութիւններ տեղի պիտի ունենան ի պատիւ Միաբանութեան Աբբասօր եւ իր հիմնած Միաբանութեան, իրենց ազգային եւ հոգեւոր նպաստին՝ Հայ ժողովուրդի մշակութային եւ ընկերային վերածնունդին համար: Միաբանութեան Մայրավանքի 300ամեայ յոբելեանին կազմակերպող յանձնախումբը պիտի յայտնէ յաջորդաբար նախատեսուած գործունէութիւններուն օրացույցը: Միաբանութեան Միաբանութիւնը կը հրաւիրէ յատկապէս մեր բոլոր հայրենակիցները միանալու եւ մասնակցելու յօբեկրական ուրախութիւն հանդիսութիւններուն:

Դիւան Սուրբ Ղազարու Միաբանութեան Միաբանութեան

### ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՇԻՆԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՐՈՍԱՄԱՐՏ

Շարունակուած էջ 16-էն

արձակել, ի զուր էին պայքարել գորքին համախմբելու: Այնպէս էին սպաւորուել, որ հայերը շատ նկատելի յարձակում էին կազմակերպել: Կէս ժամից յետոյ, դուշմանի զնդապետը նահանջի հրաման էր արձակել, սուրը, հողաթափերը թողնելով... փախել:

Արեւի այգեբացի առաջին ժպիտը աւետել էր հայոց յաղթանակը, նրանց յաղթ սրտերին հուր կաթել: Հետապնդել էին անտառում մոլորուած թուրքի զինուորներին, ոչնչացրել նրանց: Փրկութեան այդ կուռում գոհուել էին երեք քաջեր, վիրաւորուել չորսը, որոնց արիւնով սրբացել են լոյսի աստուած Ապոլոնի Մուսա քոյրերի պաշտամունքի լեռները: Այդ մարտում, աւելի քան երկու հարիւր թուրք զինուորներ էին սպանուել, ինչո՞ւ էին կուռի եկել այդ լեռներ: Շինական Աբբասամ Արամայիտեան պիտի ասէր իր զգեստած թուրք զինուորին՝ «Ձեմ սպանում քեզ, ինչո՞ւ ես կուռի եկել այս հեռու լեռներ, գնա՛ մանչերիդ, գնա՛ արդար քրտինքով վաստակած հաց տուր նրանց»: Եօթը Մառտեք հրացաններ, երկու հազար հինգ հարիւր փամփուշտներ եւ մի ջորի էին ուզում դաշտից աւար վերցրել: Ընդհանրապէս «Մուսաների Լերան» դիւցազնամարտում, ըստ ոմանց յայտնածի,

նուագագոյնը 600-700 զինուոր էր սպանուել, վիրաւորուել 190, ըստ ուրիշների եւ Արմենակ հօրս պատմածի՝ հազար ու նոյնիսկ աւելի:

Թշնամին, տարբեր դիրքերից նորէն էր սկսել յարձակուել, տեղի էին ունեցել կատաղի մարտեր, սակայն ոչ նման զիշերային այն կուռին: Պիթիաս գիւղի բարձունքի դիտարկման մի վայրից ժայռաբեկորներ գլորել լեռան գահաւէժ կողմի վար յարձակման փորձ կատարող դուշմանի զինուորների վրայ, կործանարար վնասներ պատճառել նրանց: Կուսելով լեռանկանների վառօդի ու փամփուշտների նուագիլը, վիրաւորական կոչելով առաջարկել յանձնուել: Նաեւ իրագեկ լինելով, որ լեռան պաշտպանները սննդի քիչ պաշար ունէին, թշնամին նոր մարտավարութիւն էր մշակել: Յաջորդ մի քանի օրերին հաւաքագրել բազմաթիւ մղոններով շառաւիղի թուրք բնակչութեան տասնհինգ հազարանոց աւարաւոր հրոսակախումբ, պաշարել լեռը, սովամահութեան սպառնալիքով հարկադրել անձնատուր լինել: Լեռան լանջերին եւ գիւղերի բլուրների վրայ պատնէշներ են կառուցել, արգելելու գիշերները գիւղերի շրջակայ պարտէզներից ուտելիք հայթայթել: Սակայն, խիզախ ու անվախ շինականները շարունակել էին զիշերային երթերով պարտէզներից ուտելիք բերել:

(Շարունակելի)


**Save the Date**  
**Event: AACCCWD 2017 Convention & Assembly**  
**Guest Lecturers: Very Rev. Fr. Daniel Findikyan,**  
**Dr. Kimberly James, Mr. Sevag Derderian**

**Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝**

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ **ՎԱՀԷ ԱՉԱԳԱՀԵԱՆԻՆ:**

**Vahe Atchabahian**  
 1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
**Tel: 626-354-5924**  
 vamedia@yahoo.com

NATIONAL NOTARY ASSOCIATION  
 NOTARY PUBLIC

MEMBER

**Garine Depoyan**

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
 ghdepyan@gmail.com

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ**

ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)  
 ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՍԱՆՐԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝  
 ԴԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680



### Լուսանկարներ Հայաստանի Անկախության 26րդ Տարեդարձ Փառատոնին

